




4



8



12



22

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ . . .

tax ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

4

- 4 Ստվերի դեմ պայքար՝ նաև հսկիչ կետերի միջոցով
 Հարցազրույց արտաքին ապրանքաշրջանառության հաշվառման և հսկողության տեսչության պետի պաշտոնակատար Մ. Հայրապետյանի հետ

tax ԼՈՒՐԵՐ

8

- 8 Դեպի թափանցիկ համակարգ՝ ամենօրյա գործելաոճով
 8 Պետական կառույցը՝ ապագա մասնագետների կողքին
 8 Համակարգի բացերը բացահայտում են հարցումները
 9 Բոլորը դեպի հարկային դաշտ
 10 Հրատապ երկխոսություն

tax ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

12

- 12 Հունվար-սեպտեմբերը ևս՝ գերակատարումներով
 14 Կիսամյակային ստուգումները պետբյուջեին շուրջ 352մլն դրամ են բերել
 15 2010 թվականի առաջին կիսամյակի իրավական վիճակագրությունը
 16 Պետական բյուջեի՝ 2010 թ.-ի առաջին կիսամյակի եկամուտներ

tax ՕՐԵՆՔ

18

- 18 Օրենսդրական նորամուծություններ
 18 Ընդդեմ անորակ խմիչքների՝ «Ակցիզային հարկի մասին» օրենքով
 18 «Կանաչ լույս»՝ Արցախի գորգագործների համար
 Փոփոխվել է «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքը
 18 Առանց ԱԱՀ-ի զբոսաշրջային ծառայություն՝ Արցախի տարածքում

tax ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

20

- 20 ՀԴՄ-ները 10 տարի առաջ և այսօր
 ՀԴՄ կիրառման գործընթացը նոր որակ է ձեռք բերում

tax ՌԵՊՈՐՏԱԺ

22

- 22 Համահայկական հպարտություն՝ վերածնվող Շուշի
 23 1 օր Շուշիի հարկային տեսչությունում
 Հարցազրույց Շուշիի շրջանի հարկային տեսչության պետ Վիտալիկ Լալայանի հետ



38



42



46



52

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

tax top

26

- 26 Պաշտոններ՝ առանց ծանոթի. դիմորդի միջնորդը գիտելիքն է, գնահատողը՝ համակարգիչը
 Հարցազրույց մրցութային և ատեստավորման հանձնաժողովի նախագահ Արթուր Հարությունյանի հետ

tax ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐ

30

- 30 2010թ.-ի առաջին կիսամյակում 100 խոշորները պետությունը են փոխանցել 5.7մլրդ դրամ.
 100 խոշորների առաջատարը դարձյալ «ԲեՅՁ ՄԵԹԸԼՍ»-ն է
- 34 Արցախի 64 կազմակերպություն 778մլն դրամի հարկային վնաս է հայտարարագրել
- 34 «Անհուսալի» ապառքներ կուտակած կազմակերպությունները՝ հիմնական ապառքատերեր

tax ՈՒՈՐՏ

38

- 38 «Մինչև 2012թ.-ը Արցախի էլեկտրաէներգիա ներկրողից կդառնա էլեկտրաէներգիա արտահանող երկիր»,- հայտարարում է Արտադրական ենթակառուցվածքների վարչության պետ Կ.Պետրոսյանը
- 42 Արցախյան էներգետիկ բումը.
 5 ՀԷԿ-երի շահագործմամբ կբավարարվի տեղական պահանջարկի 85 տոկոսը
 «Արցախ ՀԷԿ»-ի գլխավոր տնօրեն Վահրամ Բեգլարյանի համոզմունքն է

tax ԼՅՈՒՔՍ

46

- 46 Համաշխարհային հսկաները՝ արցախյան բրենդի ստվերում
 Հարցազրույց «Արցախ բրենդի կոմպանի» ՓԲԸ հիմնադիր Գեորգի Օհանյանի հետ

tax ԲԻԶՆԵՍ

50

- 50 Հմայիչ Արցախի գրավիչ բիզնես աշխարհը
 «Իրատես գործարարի աչքը Արցախի ճամփին է. այստեղ կարելի է սկսել, զարգանալ, կայանալ»,- համոզվել է «Ֆորս Դիստրիբյուշն» ՍՊԸ-ի գործադիր տնօրեն Արմեն Ղազարյանը

tax ԱՇԽԱՐՀ

52

- 52 TOP 10. Աշխարհի ամենահարմար հարկային համակարգերը

www.tax.nk.am



ԼՂՀ ԿԱ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

ԹԻՎ 2 | 2010 | ՀՈՒՆԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ

Գլխավոր խմբագիր՝
Նելլի Մանուչարյան

Հեղինակներ՝
Շաքե Ղազարյան
Արմինե Մուսայելյան

Արտ խումբ՝
Գևորգ Գաբրիելյան
Նելլի Բարսեղյան
Նաիրա Պետրոսյան

Լուսանկարիչ՝
Արեգ Բալայան

Գովազդ և մարկետինգ՝
Հեռ.՝ 94 86 20

Հրատարակության 1-ին տարի
Ծավալը՝ 56 էջ
Տպաքանակը՝ 2000

Տրված է տպագրության
11.10.10

Հեռ.՝ 94-86-20
Էլ. փոստ՝ info@taxservice.nk.am

Մեջբերումներ անելիս հղումը
«Հարկատու» ամսագրին
պարտադիր է:

Ամսագրի հղվածների մասնակի կամ
ամբողջական հեռուստառադիոընթերցումն
առանց «Հարկատու» ամսագրին
վկայակոչելու արգելվում է:

Ամսագիրը տպագրվում է «Տիգրան Մեծ»
հրատարակչության տպարանում:

tax

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՐԴՊՈՒՆԱՎԵՏ ՎԵՐԱԽՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

«Որքան վերահսկելի են ներմուծումները,
այնքան տեսանելի են իրացման ծավալները»

Հարցազրույց արտաքին ապրանքաշրջանառության
հաշվառման և հսկողության տեսչության պետի
պաշտոնակատար Մարատ Հայրապետյանի հետ

ՍՏՎԵՐԻ ՂԵՄ ՊԱՅՔԱՐ՝
ՆԱԵՎ ՀՍԿԻՉ ԿԵՏԵՐԻ ՄԻՋՈՅՈՎ



- Պարոն Հայրապետյան, Արցախում շուրջ 10 տարի առաջ ստեղծվեցին հաշվառման հսկիչ կետեր: Որո՞նք են դրանց գործունեության շրջանակները, կոնկրետ ի՞նչ աշխատանք է կատարում այդ օղակը և, ընդհանրապես, ի՞նչ նպատակով են դրանք ստեղծվել:

- ԼՂՀ տարածքի տնտեսական պաշտպանության, նրա արտաքին սահմաններով ապրանքանյութական արժեքների (բեռների, ապրանքների, այլ արժեքների ու առարկաների) ներմուծումն ու արտահանումը կանոնակարգելու նպատակով 2000թ.-ին ստեղծվել են Շուշիի (Եղծահողի), Մարտակերտի (Գետավանի) և Հադրութի (9 կիլոմետր) հաշվառման հսկիչ կետերը: Այսօր դրանք տեղադրված են Աղավտյի, Ջաբրայիլի և Գետավան-Վարդենիս-Քարվաճառ խաչմերուկի, այսինքն՝ կամրջի հատվածի տեղամասերում:

Հսկիչ կետերը գործում են ԼՂՀ ԿԱ հարկային պետական ծառայության արտաքին ապրանքաշրջանառության հաշվառման և հսկողության տեսչության կազմում:

Դրանք գործում են շուրջօրյա ռեժիմով՝ ապահովելով ԼՂՀ տարածք ներմուծվող-արտահանվող ապրանքանյութական արժեքների հաշվառումն ու համապատասխան ձևակերպումները, ուղեկցող փաստաթղթերի համապատասխանության ստուգումները:

ԼՂՀ տարածք ապրանքանյութական արժեքների ներմուծման և արտահանման գործընթացն այժմ կանոնակարգվում է հետևյալ կերպ. հսկիչ կետերում ԼՂՀ տարածք ներկրվող ապրանքանյութական արժեքները հաշվառվում են հսկիչ կետի պաշտոնատար անձի կողմից, իսկ հաշվառման անհնարինության դեպքում՝ կապարակնքվում՝ հետագայում հարկային տեսուչի կողմից ապրանքանյութական արժեքների հաշվառումն իրականացնելով տնտեսվարող սուբյեկտի օբյեկտում:

Հսկիչ կետերը մեծ դերակատարում ունեն տնտեսության ստվերային հատվածի բացահայտման ու կրճատման գործում, և

Հսկիչ կետերը մեծ դերակատարում ունեն տնտեսության ստվերային հատվածի բացահայտման ու կրճատման գործում, և ստվերի դեմ տարվող պայքարը պետք է սկսել հենց ապրանքանյութական արժեքները ԼՂՀ տարածք ներմուծման-արտահանման պահից. որքան վերահսկվում է տնտեսվարող սուբյեկտի ներմուծման գործընթացը, այնքան պարզորոշ են նրա իրացման ծավալները, և հարկերը թաքցնելու քիչ հավանականություն կա:

ստվերի դեմ տարվող պայքարը պետք է սկսել հենց ապրանքանյութական արժեքները ԼՂՀ տարածք ներմուծման-արտահանման պահից. որքան վերահսկվում է տնտեսվարող սուբյեկտի ներմուծման գործընթացը, այնքան պարզորոշ են նրա իրացման ծավալները, և հարկերը թաքցնելու քիչ հավանականություն կա:

Բացի այդ, հսկիչ կետերի գործունեությամբ կանխվում են նաև ապօրինի ձեռնարկատիրական գործունեության դեպքերը, հսկողություն է իրականացվում դրոշմավորման կանոնների պահպանման նկատմամբ և այլն:

Վերջին տարիներին ներմուծման նկատմամբ վերահսկողությունն էապես ակտիվացել է, ինչի արդյունքում ըստ տարիների պատկերը հետևյալն է՝

ԼՂՀ տարածք ապրանքանյութական արժեքների ներմուծման ծավալները կազմել են՝ 2007թ.-ին՝ 34.313մլն դրամ, 2008թ.-ին՝ 54971.4մլն դրամ, 2009թ.-ին՝ 62423.4 և այս տարվա առաջին կիսամյակում՝ 31966.2մլն դրամ: Նույն ժամանակահատվածներում արտահանման պատկերը հետևյալն է. 2007-ին՝ 16435.3մլն դրամ, 2008-ին՝ 14520.4մլն

դրամ, 2009ին՝ 16694.1մլն դրամ և 2010թ.-ի առաջին կիսամյակում՝ 8577.2մլն դրամ ապրանքանյութական արժեքներ:





Հսկիչ կետերի գործունեությամբ կանխվում են նաև ապօրինի ձեռնարկատիրական գործունեության դեպքերը, հսկողություն է իրականացվում դրոշմավորման կանոնների պահպանման նկատմամբ և այլն: Վերջին տարիներին ներմուծման նկատմամբ վերահսկողությունն էապես ակտիվացել է:



- Հսկիչ կետերով գրանցվող գործարքների ի՞նչ հարաբերակցություն է արձանագրվում:

- Ներմուծման-արտահանման գործարքների 98.5%-ը կատարվում է Ադալտյի հսկիչ կետով, 1.05%-ը՝ Գետավան-Վարդենիս-Քարվաճառ խաչմերուկի հսկիչ կետով և միայն 0.45%-ը՝ Ջաբրայիլի տեղամասով: Նման հարաբերակցությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հիմնականում մուտքն ու ելքը հանրապետություն կատարվում է Գորիս-Ստեփանակերտ մայրուղիով:

Այսինքն՝ այս տվյալները փաստում են, որ ներմուծումների և արտահանումների մեծ աշխուժություն է նկատվում Ադալտյի հսկիչ կետում: այստեղ հերթապահության ժամանակ լրացվում է մոտ 400-450 քարտ, կապարակնքվում 150-200 ավտոմեքենա, այնինչ մյուս հսկիչ կետերում օրական կատարվում է 15-20 գրանցում:

- Պրն Հայրապետյան, հաշվառման գործընթացն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով առաջիկայում որևէ բարեփոխում նախատեսվո՞ւմ է:



- Իհարկե: Այսօր կան որոշակի խնդիրներ, որոնք խոչընդոտում են գործընթացի լիարժեք կազմակերպումը: Անհրաժեշտ է իրականացնել հսկիչ կետերի շենքային պայմանների բարեկարգում, համակարգիչների և էլեկտրոնային կապի ներդրում, ինչը կապահովի իրական ժամանակում տվյալների մուտքագրումը միասնական համակարգ:

Բացակայում է սուբյեկտների կողմից անցակետը շրջանցելու դեպքում կոշտ պատասխանատվության միջոցների կիրառման համակարգը: Կապարակնեված ապրանքանյութական արժեքների հաշվառման գործընթացը կազմակերպելու համար հարկային տեսուչը շատ հաճախ ստիպված է ոչ աշխատանքային, նույնիսկ գիշերային ժամերին աշխատել, հակառակ պարագայում հաշվառումը դառնում է անհնար՝ հանդիսանալով սուբյեկտի աշխատանքի ընդհատման պատճառ, քանի որ այն կատարվում է հարկային տեսուչի պարտադիր մասնակցությամբ: Թվարկված բոլոր այս խնդիրների լուծման նպատակով այժմ մշակվում են համապատասխան նորմատիվ ակտեր:

ԼՂՀ կառավարության 2010-2012 թվականների գործունեության միջոցառումների ծրագրով նախատեսված է Աղավնո տեղամասի հսկիչ կետի շենքային պայմանների բարեկարգում և ժամանակակից տեխնիկական միջոցների ներդրում: Ղեկավարության մշտական ուշադրության կենտրոնում է նաև կադրային խնդիրը: 

Վերջին տարիներին ներմուծման նկատմամբ վերահսկողությունը էապես ակտիվացել է, ինչի արդյունքում ըստ տարիների պատկերը հետևյալն է՝

ԼՂՀ տարածք ապրանքանյութական արժեքների ներմուծման ծավալները կազմել են՝ 2007թ.-ին՝ 34.313մլն դրամ, 2008թ.-ին՝ 54971.4մլն դրամ, 2009թ.-ին՝ 62423.4 և այս տարվա առաջին կիսամյակում՝ 31966.2մլն դրամ: Նույն ժամանակահատվածներում արտահանման պատկերը հետևյալն է. 2007-ին՝ 16435.3մլն դրամ, 2008-ին՝ 14520.4մլն դրամ, 2009ին՝ 16694.1մլն դրամ և 2010թ.-ի առաջին կիսամյակում՝ 8577.2մլն դրամ ապրանքանյութական արժեքներ:



ԴԵՊԻ **ԹԱՓԱՆՅԻՎ** ՀԱՄԱԿԱՐԳ՝ ԱՄԵՆՕՐՅԱ ԳՈՐԾԵԼԱՌՃՈՎ

Հասարակությունը պետք է մշտապես տեղյակ լինի հարկային համակարգում կատարվող փոփոխություններին և հատկապես՝ բարեփոխումների ընթացքին. կառույցի ղեկավարության այս համոզմունքի և սկզբունքի արդյունքը հարկ վճարողները զգում են նաև պարբերաբար կազմակերպվող իրազեկման հանդիպումների միջոցով:

Ղեկավարության գործելաոճը հայտնի է՝ գործընկերային հարաբերություններ ձևավորել՝ հասարակության շահագրգիռ խավերին իրազեկ դարձնելով բարեփոխումների ընթացքին և շեշտը դնելով հարկային մարմնի թափանցիկության ու հրապարակայնության վրա:

Այդ նպատակով կազմակերպված հանդիպումների պակաս տարվա ընթացքում չի զգացվել:

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑԸ՝ ԱՊԱԳԱ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ԿՈՂՔԻՆ

Ապագա կադրային ներուժը՝ Արցախի պետական համալսարանի ուսանողները, կարելի է ասել, հարկային համակարգի գործընկերներն են արդեն այսօրվանից: Հենց նրանց հետ է Հարկային պետական ծառայության պետը պարբերաբար հանդիպում, քննարկում հրատապ խնդիրները, խոսում առաջնահերթ քայլերի մասին:

Հասարակությունը պետք է մշտապես տեղյակ լինի հարկային համակարգում կատարվող փոփոխություններին և հատկապես՝ բարեփոխումների ընթացքին:

ԼՂՀ ԿԱ ՀՊԾ պետ Արտակ Բալայան

տետի ուսանողների և արոֆեսորադասախոսական կազմի հետ Արտակ Բալայանի հերթական հանդիպման օրակարգը ևս հագեցած էր. համակարգի ղեկավարը ներկայացրել է վերջին երկու տարվա ընթացքում ձեռնարկված քայլերն ու դրանց արդյունքում ձևավորված հարկային համակարգի ներկայիս կառուցվածքը: Ապագա մասնագետները հնարավորություն են ունեցել հենց առաջին ձեռքից լսել կադրային քաղաքականության, էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման, հարկ վճարող-հարկային մարմնի փոխհամագործակցության դաշտի բարելավման, հսկողական աշխատանքների արդյունավետության բարձրացման և մի շարք այլ ուղղություններով իրականացվող միջոցառումների մասին: Իսկ եթե կան անհանգստացնող հարցեր, ապա սա լավագույն հնարավորությունն է դրանք ուղղել կառույցի ղեկավարին և ստանալ սպառիչ պատասխաններ:

Հանդիպումներն այդպիսով չեն սահմանափակվում. հարկային բարեփոխումների ընթացքը, որպես կանոն, ներկայացվում է նաև տնտեսագիտության ոլորտի մասնագետներին ու հարկ վճարողներին, ովքեր հարկային մարմնի մասնագետների հետ մշտական երկխոսության հնարավորություն ունեն:

ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՑԵՐԸ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ ԵՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԸ

Հարկային համակարգի այսօրվա վիճակը գնահատելու և հետագա կատարելագործման առաջարկներ կատարելու նպատակով այս տարվա ընթացքում Արցախի պետական համալսարանի տնտեսաիրավաբանական ֆակուլտետի ու-



սանողների միջոցով շուրջ 500 հարկ վճարողների և 500 քաղաքացիների շրջանում կազմակերպվել է հարցում:

Արդյունքում պարզ է դարձել, որ հարցվածների ճնշող մեծամասնությունը բարձր է գնահատում հարկ վճարողներին ցուցաբերվող ուսուցողական աջակցության հարկային պետական ծառայության նախաձեռնությունները: Հարցվածները դրական են արտահայտվել նաև հարկային մարմինների կողմից կազմակերպվող սպասարկման գործընթացի, հարկային ծառայողների արհեստավարժության և մասնագիտական պատրաստվածության մակարդակի վերաբերյալ:

Միաժամանակ, հարցման արդյունքները ցույց են տվել, որ բազմաթիվ հարկ վճարողներ տեղյակ չեն իրենց իրավունքներին և ընթացակարգերին: Այս առումով կարևորվում է նրանց իրազեկումը. պետք է ակտիվանա հարկատուների իրավունքների և պաշտպանության վերաբերյալ ուսուցողական և տեղեկատվական նյութերի պատրաստումը և տարածումը, զուգահեռ իրականացվեն լուսաբանման և պարզաբանման ակտիվ քարոզչական քայլեր:

Քաղաքացիների շրջանում կազմակերպված հարցման արդյունքները վկայում են, որ հասարակությունն անտարբեր չէ հարկային համակարգի նախաձեռնությունների նկատմամբ և պատրաստ է աջակցել հարկային մարմիններին՝ արդյունավետ վարչարարություն իրականացնելու առումով:

Նմանօրինակ հարցումները շարունակական են. դրանք թույլ են տալիս հստակ պատկերացնել հարկային վարչարարության իրավիճակը, բացահայտել համակարգում գոյություն ունեցող բացերը, նոր հարթության վրա դիտարկել մի շարք էական խնդիրներ, բարեփոխումներն իրականացնել ժամանակին համահունչ: 

ԲՈԼՈՐԸ ԴԵՊԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԴԱՇՏ

Կասկածելի գինիները՝ վաճառքում

ԼՂՂ ՀԴԾ օպերատիվ հետախուզության վարչության աշխատակիցների կողմից հայտնաբերվել է չդրոշմավորված գինիների իրացման դեպք: Ձեռնարկված օպերատիվ միջոցառումների արդյունքում պարզվել է, որ անհատ ձեռնարկատեր Հայկ Ասատրյանն իրականացրել է «Արտաշես» պիտակի «Խնդողնի» գինու արտադրություն և շաղցում

Լ.Հուրունց փակուղում և արտադրված ապրանքն իրացրել է «Վահագն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջոցով՝ առանց ակցիզային դրոշմանիշների: Անհատ ձեռնարկատեր Հայկ Ասատրյանին և «Վահագն» ՍՊԸ-ին առաջադրվել է վարչական պատասխանատվություն: Հայտնաբերված արտադրանքը դուրս է բերվել շրջանառությունից:

Դռների և պատուհանների ապօրինի արտադրությունը դադարեցվել է

Ապօրինի ձեռնարկատիրական գործունեության մեկ այլ դեպքի բացահայտում. Օպերատիվ հետախուզության վարչության աշխատակիցների ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ Ստեփանակերտի բնակիչ Վարդան Ռ. Ալեքսանյանն այս տարվա օգոստոսի 10-ից 16-ը Հայկական թաղամա-

սի 13 հասցեում առանց պետական գրանցման իրականացրել է պատուհանների և դռների /այդ թվում՝ այլումինե/ արտադրություն և վաճառք: Վ.Ալեքսանյանին օրենսդրությամբ սահմանված կարգով առաջադրվել է տուգանք և պարտադրվել դադարեցնել ապօրինի գործունեությունը՝ մինչև համապատասխան պահանջների ապահովումը:

Ապօրինի լողավազանը՝ հարկային դաշտից դուրս

Մյուս դեպքում էլ Օպերատիվ հետախուզության վարչության աշխատակիցները պարզել են, որ Ստեփանակերտի բնակիչ Ռաֆայել Հայրիյանը հունիս-հուլիս ամիսներին Նոր Արեշ տեղամասում՝ առանց պետական գրանցման և հարկային մարմնում հաշվառվելու, լողավազան է շահագործել: Ռ.Հայրիյանին օրենսդրությամբ սահմանված կարգով առաջադրվել է տուգանք և պարտադրվել դադարեցնել ապօրինի գործունեությունը՝ մինչև համապատասխան պահանջների ապահովումը: 



❓ - Ապրանքների անհատույց մատակարարման դեպքում հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարները դիտվում են որպես ծախս՝ հարկվող շահույթը որոշելիս:

- Հարկվող շահույթը որոշելիս՝ ապրանքների անհատույց մատակարարման, ծառայությունների անհատույց մատուցման դեպքում ավելացված արժեքի հարկով հարկվող օբյեկտի նկատմամբ հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարները համախառն եկամտից չեն նվազեցվում:

❓ - Ոչ առևտրային կազմակերպությունները պարտավոր են ներկայացնել շահութահարկի հաշվարկ:

- Ոչ առևտրային կազմակերպությունները կարող են շահութահարկի հաշվարկ չներկայացնել միայն այն դեպքում, եթե ստացված միջոցները, համաձայն «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 8-րդ հոդվածի, եկամուտ չեն համարվում:

❓ - Կազմակերպությունները հսկիչ-դրամարկդային մեքենաների կտրոններով ձեռքբերումների մասով եկամտահարկ պահում են:

- Կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը հսկիչ-դրամարկդային մեքենաների կտրոններով, ինչպես նաև կրճատ հաշիվ-ապրանքագրերով ձեռքբերումների մասով՝ անկախ դրանց չափից, ազատվում են որպես հարկային գործակալ 5% դրույքաչափով եկամտահարկը պահելու և բյուջե վճարելու պարտավորությունից:

- «Եկամտահարկի մասին» ԼՂՀ օրենքով, չօգտագործված արձակուրդի համար փոխհատուցման գումարները ներառվում են աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված եկամուտների մեջ, որից եկամտահարկը հաշվարկվում է հաշվեգրման եղանակով: Իսկ «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ԼՂՀ օրենքով, չօգտագործված արձակուրդի համար փոխհատուցման գումարներից պարտադիր սոցիալական ապահովության վճարներ չեն հաշվարկվում:

❓ - Ակցիզային հարկ վճարողի կողմից ճշտված հաշվարկներ ներկայացնելիս, եթե դրանք ներկայացվում են մի քանի հաշվետու ժամանակաշրջանների համար, մեկից ավելի ճշտված հաշվարկներ ներկայացնելու համար տուգանք կիրառվում է:

- «Ակցիզային հարկի մասին» ԼՂՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետով՝ սահմանված տուգանքը կիրառվում է միևնույն հաշվետու ժամանակաշրջանի համար մեկից ավելի ճշտված հաշվարկներ ներկայացնելու համար: Եթե հարկ վճարողի կողմից ներկայացվող ճշտված հաշվարկները վերաբերում են տարբեր ժամանակահատվածների և դրանց թիվը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար չի գերազանցում մեկը, տուգանք չի կիրառվում: Ընդ որում, ԼՂՀ-ում արտադրված և արտահանված գինեկոթի ու կոնյակի սպիրտի՝ որպես հումք օտարման դեպքում, ակցիզային հարկից ազատման արտոնությունից օգտվելու դիմումի մերժման հիմքերի վե-



ՀՐԱՏԱՊ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ

❓ - Զօգտագործված արձակուրդի փոխհատուցման վճարներից եկամտահարկ և պարտադիր սոցիալական ապահովության վճար պահվում են:

րացման արդյունքում հարկ վճարողի կողմից ներկայացված ակցիզային հարկի հաշվարկները չեն համարվում ճշտված հաշվարկներ:



1 - Առևտրի հարկ վճարողների կողմից եռամսյակի ընթացքում «ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծված այնպիսի ապրանքների ներմուծման ծավալը, որոնց համար նախատեսված չէ ավելացված արժեքի հարկի գանձում ներմուծման պահին, 250 հազ. դրամը գերազանցելու դեպքում, ի՞նչ ժամկետով և պայմաններով է առևտրի հարկ վճարողը դադարում համարվել այդպիսին:

- «Առևտրի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ եռամսյակի ընթացքում առևտրի հարկ վճարողի կողմից «ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծված այնպիսի ապրանքների ներմուծման ծավալը, որոնց համար նախատեսված չէ ավելացված արժեքի հարկի գանձում ներմուծման պահին, 250 հազար դրամը գերազանցելու դեպքում դադարում է համարվել այդպիսին՝ նշված փաստը տեղի ունենալու պահից, այնուհետև, նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ կետի «գ» ենթակետի համաձայն, մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ չի կարող համարվել առևտրի հարկ վճարող: Ընդ որում, նշված փաստը տեղի ունենալու դեպքում առևտրի հարկ վճարողն այլ ապրանքների վաճառքի մասով ևս դադարում է համարվել այդպիսին:

2 - Առաքված ապրանքի հետվերադարձի դեպքում առաքման գրքում ուղղումներ կատարվո՞ւմ են:

- Առաքված ապրանքները հետ վերադարձնելու դեպքում առաքումների գրանցման գրքում ուղղումներ չեն կատարվում: Այդ ապրանքների հետվերադարձը ձևակերպվում և գրանցվում է հաշվապահական հաշվառման գործող կարգին համապատասխան:

3 - Ավելացված արժեքի հարկի գծով սխալներն ինքնուրույն հատնաբերելիս՝ ո՞ր դեպքերում կարող է սահմանափակվել հարկ վճարողի կողմից ճշտված հաշվարկների ներկայացման հնարավորությունը:

- «Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 33-րդ հոդվածի համաձայն՝ ավելացված արժեքի հարկի գծով սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում դրանց ճշգրտման արդյունքներով չեն կարող ներկայացվել ճշտված հաշվարկներ, եթե դրանք վերաբերում են հարկային մարմինների կողմից ստուգվող կամ արդեն իսկ ստուգված ժամանակաշրջաններին, ինչպես նաև ԱԱՀ վճարող չհանդիսացող անձանց կողմից դուրս գրված հարկային հաշիվներին, այն ապրանքներին և ծառայություններին, որոնք ազատված են ԱԱՀ-ից և հարկման օբյեկտ չհանդիսացող կամ գրոյական դրույքաչափով հարկվող գործարքներին: Միաժամանակ, «Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 31-րդ հոդվածի համաձայն, հարկային պարտավորության գումարները նվազեցնող կամ հաշվանցող գումարներն ավելացնող ճշտված հարշվարկներ չեն կարող ներկայացվել, եթե այդ գումարները վերաբե-

րում են այն հաշվետու ժամանակաշրջանին, որից անցել է երեք տարի:

4 - Ինչպե՞ս է որոշվում որևէ ամսվա հաստատագրված վճարի չափը՝ ավտոտրանսպորտային միջոցների գազալցման գործունեությունն ամսվա ընթացքում սկսելու դեպքում:

-Քանի որ ավտոտրանսպորտային միջոցների գազալցման գործունեության համար հաստատագրված վճարի ամսական չափը հաշվարկելիս ամսվա ընթացքում գործունեության իրականացման օրացուցային օրերը և դրանց թիվը ելակետային տվյալ չեն համարվում, ապա, անկախ գործունեության սկսման օրվանից, հաստատագրված վճարը հաշվարկվում է ամբողջ ամսվա համար:

5 - Հանրային սննդի ոլորտում առանց սպասարկման սրահի գործունեություն իրականացնող ինչպե՞ս է հաշվարկվում հաստատագրված վճարը:

-Սպասարկման սրահ չունեցող վայրերի համար սպասարկման մակերեսը, համաձայն «Հաստատագրված վճարների մասին» ԼՂՀ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ կետի, ընդունվում է 20քմ: Ընդ որում, հաստատագրված վճարները հաշվարկելիս՝ հանրային սննդի գործունեության իրականացման վայրի (օբյեկտի) զբաղեցրած սպասարկման սրահի մակերեսի (մինչև 50քմ) հետ կապված լրացուցիչ ուղղիչ գործակից չի կիրառվում:

Սպասարկման սրահ չունեցող օբյեկտների միջոցով հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության համար, անկախ վերջիններիս բացօթյա լինել կամ չլինելու հանգամանքից, բացօթյա վայրերի համար նախատեսված ուղղիչ գործակիցներ չեն կիրառվում:

6 -Հասույթի գրանցման գրքի լրացման ինչպիսի՞ առանձնահատկություններ են սահմանված հանրային սննդի ոլորտի համար:

- Հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող հարկ վճարողները գրանցման գրքում գրանցումները կատարում են ըստ ձեռք բերված հումքի, նյութերի, կիսաֆաբրիկատների և այլ ապրանքների, որոնք համապատասխան մշակման արդյունքում ստանում են խոհարարական արտադրանքի տեսք:

Հանրային սննդի ոլորտում իրականացվող այն գործունեության մասով, որի արդյունքում ձեռք բերված հումքը, ապրանքները չեն ենթարկվում մշակման (չեն ստանում սեփական արտադրության արտադրանքի տեսք և վաճառվում են նախնական տեսքով), գրանցումները կատարվում են ընդհանուր սահմանված կարգով:

ՀՈՒՆՎԱՐ-ՍԵՊՏԵՄԲԵՐԸ ԵՎ Ս՝ ԳԵՐԱԿԱՏԱՐՈՒՄՆԵՐՈՎ

ԼՂՀ հարկային պետական ծառայությունը 2010թ.-ի առաջին ինն ամիսներն ամփոփել է գերակատարումներով, ինչը շարունակական բնույթ է կրում հենց տարեկան զբաղմունքից:

Հունվար-սեպտեմբեր ամիսներին ԼՂՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները, տուրքերը և պարտադիր սոցիալական ապահովության վճարները կազմել են 15մլրդ դրամից ավելի, ինչը պլանային ցուցանիշը՝ շուրջ 14.4մլրդ դրամը, գերազանցել է 4.5%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի

Հարկային եկամուտները, տուրքերը և պարտադիր սոցիալական ապահովության վճարները կազմել են 13մլրդ դրամից ավելի, ինչը պլանային ցուցանիշը՝ շուրջ 12.5մլրդ դրամը, գերազանցել է 4.7%-ով:



ցուցանիշը՝ 13.3%-ով կամ շուրջ 1.8մլրդ դրամով: Հավաքագրումներն, ի դեպ, 24.4 տոկոսով գերազանցում են 2008թ.-ի ցուցանիշը:

Հարկային եկամուտների և պետական տուրքի մասով պետբյուջե է մուտքագրվել շուրջ 10.8մլրդ դրամ, այսինքն՝ պլանային առաջադրանքից 483.2մլն դրամ ավել է հավաքագրվել՝ ծրագրված ցուցանիշը գերազանցելով 4.7 տոկոսով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ մոտ 1.5մլրդ դրամով կամ 15.9 տոկոսով:


Ընթացիկ տարում հարկային եկամուտների աճը հիմնականում ապահովվել է ավելացված արժեքի հարկի, շահութահարկի, առևտրի հարկի, ավտոճանապարհային մասհանումների հաշվին: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճ է արձանագրվել հիմնականում բոլոր եկամտատեսակների գծով:

2010թ.-ի առաջին ինն ամիսներին պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասով մուտքերը կազմել են շուրջ 4.2մլրդ դրամ՝ գերակատարելով պլանային ցուցանիշը 163.4մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը՝ մոտ 280.9մլն դրամով կամ 7.1 տոկոսով: Այս մասով 2008-ի հավաքագրումների համեմատ աճ է արձանագրվել 38.5 տոկոսով:

ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՎԵՐԵԼՔ

Եթե զուգահեռներ անցկացնենք 2008, 2009 և 2010 թվականների հարկային եկամուտների, պետական տուրքի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասով հավաքագրումների միջև, ապա պատկերը հետևյալն է.

ԼՂՀ հարկային մարմինների կողմից վերահսկվող պետական բյուջեի եկամուտները՝ ըստ տարիների (մլն. դրամ)



ՀԻՇԵՔ ՀԱՐԿԱՅԻՆԸ

Հոկտեմբեր

	II	III	IV	V	VI	VII
				1	2	3
4	5	6	7	8	9	10
	11	12	13	14	15	17
18	19	20	21	22	23	24
25	26	27	28	29	30	31

բոլոր մանրամասներն այստեղ՝

www.tax.nk.am

ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ ՊԵՏԲՅՈՒՋԵԻՆ ՇՈՒՐՋ 352ՄԼՆ ԴՐԱՄ ԵՆ ԲԵՐԵԼ

331 ստուգում՝ 6 ամսում. այս տարվա առաջին կիսամյակում

ԼՂՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության կառուցվածքային ստորաբաժանումների կողմից իրականացված ստուգումները նվազել են 23%-ով. նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ հարկային մարմինները 99 ստուգումով պակաս են կատարել: Արձանագրված ցուցանիշն ավելի ակնհայտ է դարձնում տարբերությունը, երբ ստուգումների քանակը համեմատում ենք 2008-ի նույն ժամանակաշրջանի տվյալների հետ. նվազումն այս դեպքում

այս դեպքում

Այսպիսով հունվար-հուլիս ամիսների ընթացքում կատարված ստուգումների ընդհանուր կառուցվածքում կատարված ստուգումների տեսակարար կշիռը կազմել է՝

	ըստ ստուգումների քանակի	ըստ լրացուցիչ հաշվարկված գումարների
Կենտրոնական ապարատ	26.6%	83.1%
Ստեփանակերտի ՀՏ	21.7%	11.2%
Ասկերանի ՀՏ	9.4%	0.8%
Մարտակերտի ՀՏ	11.2%	1.3%
Մարտունու ՀՏ	10.6%	1.2%
Հաղործի ՀՏ	7.9%	0.7%
Շուշիի ՀՏ	3.9%	0.2%
Քաշաթաղի ՀՏ	6.0%	1.2%
Շահումյանի հարկ վճարողների սպասարկման բաժին	2.7%	0.3%

քում 43.3% է կազմում կամ պակաս՝ 253 ստուգումով:

Ստուգումների արդյունքում այս տարվա առաջին կիսամյակում լրացուցիչ հաշվարկված գումարները կազմել են 347.6 մլն դրամ. այս դեպքում էլ նվազումը 40.3% է՝ 2009-ի և 70.6%՝ 2008-ի նույն ժամանակահատվածներում արձանագրված ցուցանիշների համեմատ:

Ստուգումների արդյունքում (այդթվում՝ նախորդ տարիներին կատարված ստուգումների) այս տարվա հունվար-հուլիս ամիսների ընթացքում բյուջե է մուտքագրվել ավելի քան 352.1 մլն դրամ, ինչը 42.1 մլն դրամով կամ 13.6%-ով գերազանցում է անցած տարվա առաջին կի-


սամյակի և 88.7 մլն դրամով կամ 33.7%-ով՝ 2008-ի առաջին կիսամյակի ցուցանիշները:

Հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ճշտության ստուգումների մասով ընթացիկ տարվա առաջին կիսամյա-

կում կատարվել է 41 ստուգում, ինչը նախորդ տարվա և 2008-ի նույն ժամանակահատվածում արձանագրված ցուցանիշների համեմատ նվազել

է համապատասխանաբար 7 և 130 ստուգումներով: Ընդ որում, լրացուցիչ առաջադրվել է շուրջ 3.4 մլն դրամի տուգանք, այսինքն՝ դա պակաս է 2009-ի և 2008-ի նույն ժամանակաշրջաններում առաջադրված գումարներից համապատասխանաբար 1275.0 հազ. և 8850.0 հազ. դրամով: 

331 ստուգում՝ 6 ամսում. ստուգումները նվազել են





2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Պետբյուջե է վերականգնվել ընդհանուր առմամբ 24.6մլն դրամ

ԲՈՆԱԳԱՆՁՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

2010թ. առաջին կիսամյակի ընթացքում ներկայացված բռնագանձման 29 հայցերով (61.5մլն դրամ հայցագնով) դատարանների կողմից կայացվել է 20 վճիռ՝ 33.2մլն դրամ ընդհանուր հայցագնով, որոնցից բավարարվել են 14 հայցապահանջներ՝ 30.5մլն դրամ ընդհանուր գումարով: Նշված ժամանակահատվածում բռնագանձվել է 6.2մլն դրամ գումար:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ներկայացվել էր բռնա-

ԱՐԳԵԼԱԴՐՈՒՄ

ԼՂՀ կառավարության համապատասխան որոշման համաձայն, ընթացիկ տարվա առաջին կիսամյակի ընթացքում հարկ վճարողների գույքի վրա դրվել է 111 արգելադրում: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում հարկ վճարողների գույքի վրա դրվել էր 142 արգելադրում:

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Ընթացիկ տարվա հունվար-հունիս ամիսներին քննչական բաժին վարույթ է ընդունվել 3

նուր գումարով: Նույն ժամանակահատվածում Օպերատիվ հետախուզության վարչության կողմից բացահայտվել է հանցագործության հատկանիշներ պարունակող երկու նյութ՝ համապատասխանաբար 11.3մլն և 66.6մլն դրամ պետությանը պատճառված վնասի չափե-

Ը ընթացիկ տարվա առաջին կիսամյակի ընթացքում ԼՂՀ ԿԱ ՀՊԾ օպերատիվ հետախուզության վարչության, քննչական և իրավաբանական բաժինների իրականացրած աշխատանքների արդյունքում պետական բյուջե է վերականգնվել ընդհանուր առմամբ 24.6մլն դրամ:

գանձման 58 հայց՝ 202.7մլն դրամ հայցագնով: Նույն ժամանակահատվածում դրանցով կայացվել է 40 վճիռ՝ 151.7մլն դրամ ընդհանուր հայցագնով, որն ամբողջությամբ բավարարվել է: Այդ ժամանակահատվածում բռնագանձվել է 16.8մլն դրամ:

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

Ընթացիկ տարվա առաջին կիսամյակում կայացվել է վարչական տույժ նշանակելու մասին 542 որոշում՝ 7.65մլն դրամ ընդհանուր գումարով, որից փաստացի գանձվել է 6.7մլն դրամ, իսկ 2009թ.-ի նույն ժամանակահատվածում՝ 566 որոշում՝ 8.8մլն դրամ ընդհանուր գումարով, որից փաստացի գանձվել է 7.5մլն դրամ:

քրեական գործ: Մեկ քրեական գործով նախաքննությունն ավարտվել է և մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, մեկ քրեական գործով էլ վարույթը կասեցվել է: Հաշվետու ժամանակաշրջանում նախաքննության ընթացքում վերականգնվել է 8.1մլն դրամ:


Ըստ վիճակագրության՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում մեկ քրեական գործով վարույթը կասեցվել է:

ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2010թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում ստացվել է մեկ նյութ՝ 7.99մլն դրամ հարկային պարտավորության ընդհա-

րով: Հետքաննության ընթացքում բյուջե է վերականգնվել 3.6մլն դրամի պարտավորություն:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում հանցագործության հատկանիշներ պարունակող հարկային օրենսդրության խախտումների վերաբերյալ նյութեր չեն ստացվել:



ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ` 2010Թ.-Ի ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Հարկային եկամուտներն աճել են 8.8 տոկոսով

ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

ԼՂՀ պետական բյուջեի` 2010 թվականի առաջին կիսամյակի հարկային եկամուտները կազմել են շուրջ 6575360.1 հազ. դրամ` 8.8%-ով ավել ծրագրային

ընդհանուր բյուջետային եկամուտների 33.6%-ը, պլանավորված ցուցանիշը կատարվել է 104.9%-ով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ԱԱՀ-ի գծով ԼՂՀ պետական բյուջեի մուտքերն աճել են 608184.4 հազ. դրամի չափով կամ 21.9%-ով: Աճը հիմնականում պայմանավորված է հանքարդյունաբերության արտադրանքի միջազգային գների աճի միտումներով:

Պետական բյուջեի հարկային եկամուտների կազմում ԱԱՀ-ից հետո իր կշռով երկրորդ հարկատեսակը եկամտահարկն է: Հաշվետու ժամանակահատվածում ապահովվել է 881449.1 հազ. դրամի մուտքեր` կազմելով պետական բյուջեի հարկային եկամուտների 13.4%-ը և ընդհանուր եկամուտների 8.7%-ը, պլանավորված ցուցանիշը գերակատարվել է 38749.1 հազ. դրամով կամ 4.6%-ով: 2009թ. առաջին կիսամյակի համեմատ եկամտահարկի գծով պետական բյուջեի մուտքերն աճել են 9.5%-ով կամ 76220.3 հազ. դրամով: Եկամտահարկի գծով պետական բյուջեի մուտքերի ավելացումը պայմանավորված է վերահսկողական աշխատանքների իրականացման և ստվերի կրճատման արդյունքում որոշ ոլորտներում հայտարարագրվող միջին աշխատավարձերի բարձրացմամբ:

2010 թվականի առաջին կիսամյակում շահութահարկի գծով պետական բյուջեի եկամուտները կազմել են 748983.2 հազ. դրամ` ապահովելով հարկային եկամուտների 11.4%-ը և ընդհանուր եկամուտների 7.4%-ը, պլանավորված ցուցանիշը գերակատարվել է 27%-ով կամ ավել 159158.2 հազ. դրամով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ շահութահարկի մուտքերն աճել են 209289.5 հազ. դրամով կամ 38.8%-ով: 2009թ. առաջին կիսամյակի համեմատ հիմնական աճը գրանցվել է տնտեսության ֆինանսավարկային ոլորտում:

Պետական բյուջեի հարկային եկամուտների կազմում ակցիզային հարկի հաշվին ապահովվել են 123389.6 հազ. դրամի մուտքեր` կազմելով պետական բյուջեի հարկային եկամուտների 1.9%-ը և ընդհանուր բյուջետային եկամուտների 1.2%-ը. պլանավորված ցուցանիշը գերակատարվել է 3289.6 հազ. դրամով կամ 2.7%-ով:

Հաշվետու ժամանակաշրջանում պետական բյուջե մուտքագրված հաստատագրված վճարների գումարը կազմել է 244452.6 հազար դրամ, ապահովելով պետական բյուջեի հարկային եկամուտների 3.7%-ը, պլանավորված ցուցանիշը գերակատարվել է 1.8%-ով կամ 4232.6 հազ. դրամով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ հաստատագրված վճարների գծով մուտքերը աճել են 15790.6 հազ. դրամով կամ 6.9%-ով: Աճը պայմանավորված է հաստատագրված վճարներով հարկվող որոշ ոլորտների հարկման բազայի ընդլայնման հետ, մասնավորապես` ԼՂՀ տարածքներում ընդգրկվող բենզինի և դիզելային վառելիքի, հանրային սննդի, բենզինի և դիզելային վառելիքի մանրածախ վաճառքի, խանութների ու կրպակների միջոցով իրականացվող մանրածախ առևտրի իրականացման հետ:

2010 թվականի առաջին կիսամյակի ընթացքում պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտների 9.4%-ն ապահովվել է առևտրի հարկի հաշվին: Այս հարկատեսակի գծով մուտքերը կազմել են 619271.7 հազ. դրամ` 11%-ով ավել ծրագրային եկամուտների 33.6%-ը, պլանավորված ցուցանիշը կատարվել է 104.9%-ով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ առևտրի հարկի մուտքերն աճել են 608184.4 հազ. դրամի չափով կամ 21.9%-ով: Աճը հիմնականում պայմանավորված է հանքարդյունաբերության արտադրանքի միջազգային գների աճի միտումներով:

Պետական բյուջեի հարկային եկամուտների կազմում ԱԱՀ-ից հետո իր կշռով երկրորդ հարկատեսակը եկամտահարկն է: Հաշվետու ժամանակահատվածում ապահովվել է 881449.1 հազ. դրամի մուտքեր` կազմելով պետական բյուջեի հարկային եկամուտների 13.4%-ը և ընդհանուր եկամուտների 8.7%-ը, պլանավորված ցուցանիշը գերակատարվել է 38749.1 հազ. դրամով կամ 4.6%-ով: 2009թ. առաջին կիսամյակի համեմատ եկամտահարկի գծով պետական բյուջեի մուտքերն աճել են 9.5%-ով կամ 76220.3 հազ. դրամով: Եկամտահարկի գծով պետական բյուջեի մուտքերի ավելացումը պայմանավորված է վերահսկողական աշխատանքների իրականացման և ստվերի կրճատման արդյունքում որոշ ոլորտներում հայտարարագրվող միջին աշխատավարձերի բարձրացմամբ:

մուտքերից: 2009 թվականի առաջին կիսամյակի համեմատ պետական բյուջեի հարկային եկամուտներն աճել են 1168576.7 հազ. դրամով: Հարկային եկամուտների հաշվին է ապահովվել պետական բյուջեի եկամուտների 65.3 տոկոսը: Պետական բյուջեի հարկային եկամուտների գերակատարումը հիմնականում ապահովվել է ավելացված արժեքի հարկի, շահութահարկի, եկամտահարկի, բնապահպանական և բնօգտագործման վճարների, ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող մասհանումների, առևտրի հարկի հաշվին: Անհրաժեշտ է նշել, որ հարկային եկամուտների կիսամյակի ծրագրված ցուցանիշները կատարվել են բոլոր եկամտատեսակների գծով:

2010 թվականի առաջին կիսամյակի կտրվածքով ավելացված արժեքի հարկի գծով պետական բյուջեի մուտքերը կազմել են 3381705.2 հազ. դրամ` ապահովելով հարկային եկամուտների 51.4%-ը և





ով գերազանցելով Նախորդ տարվա ցուցանիշը, հաշվետու ժամանակաշրջանի պլանավորված ցուցանիշը՝ 10.1%-ով կամ 56746.7 հազ.դրամով:

Բնական պաշարների օգտագործման և շրջակա միջավայրի պահպանման վճարների գծով կիսամյակի կտրվածքով պետական բյուջե է մուտքագրվել 209913.2 հազար դրամ. պլանավորված ցուցանիշը գերազանցել է 30.4 տոկոսով: 2009թ. առաջին կիսամյակի համեմատ վճարի գծով պետական բյուջեի մուտքերն աճել են 91156.8 հազ. դրամի չափով կամ 76.8%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է հանքարդյունաբերական արտադրանքի միջազգային շուկաներում գների աճի հետ:

Ավտոճանապարհների շինարարության և նորոգման համար կատարվող մասհանումների մուտքերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 221805.9 հազ. դրամ, Նախատեսված ցուցանիշն ավել է կատարվել 58510.9 հազ. դրամով կամ 35.8%-ով: Նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ մասհանումների գծով մուտքերն աճել են 46.7%-ով կամ 70614.0 հազ. դրամով: Վճարների նմանատիպ աճը հիմնականում պայմանավորված է հարկ վճարողների կողմից հայտարարագրվող իրացման ծավալների աճի հետ, մասնավորապես՝ հան-

քարդյունահանման և տնտեսության այլ բնագավառներում:

Այլ հարկային եկամուտների գծով այս տարվա առաջին կիսամյակի մուտքերը կազմել են 41536.8 հազ. դրամ, ինչը ծրագրված ցուցանիշը գերազանցել է 1336.8 հազ. դրամով կամ 3.3%-ով: Նախորդ տարվա համեմատ այլ հարկային

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ԱԱՀ-ի գծով ԼՂՀ պետական բյուջեի մուտքերն աճել են 608184.4 հազ. դրամի չափով կամ 21.9%-ով:

եկամուտների գծով մուտքերը նվազել են 42.8%-ով կամ 31107.8 հազ. դրամի չափով: Նվազումը պայմանավորված է հարկային մարմինների կողմից տարվող կանխարգելիչ վարչարարական քաղաքականությամբ:

2010 թվականի առաջին կիսամյակում ռոյալթիի գծով պետբյուջեի եկամուտները կազմել են 85836.4 հազ. դրամ, ծրագրված ցուցանիշը կատարվել է 101%-ով:

Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների գծով

ԼՂՀ պետական բյուջեի եկամուտները 2010 թվականի առաջին կիսամյակում կազմել են 17016.4 հազ. դրամ կամ ծրագրված ցուցանիշը գերազանցել է 13.4%-ով, այսինքն՝ ավել 2016.4 հազ. դրամով:


ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐԵ

Պետական տուրքի գծով այս տարվա առաջին կիսամյակի բյուջեի մուտքերը կազմել են 164278.5 հազար դրամ՝ ապահովելով պետական բյուջեի եկամուտների 1.6%-ը: Պլանավորված ցուցանիշը պակաս է կատարվել 39721.5 հազ. դրամով կամ 19.5%-ով: Նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ պետական տուրքի գծով բյուջեի մուտքերը նվազել են 7.9%-ով կամ 14039.3 հազ. դրամով: Նախորդ տարվա համեմատ նվազումը հիմնականում կապված է դատարաններ տրվող հայցադիմումների, հյուպատոսական ծառայությունների, ինչպես նաև ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական անձնագիր տալու համար գործարքներից գանձվող պետական տուրքի նվազմամբ:

ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐ

Պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով կիսամյակի մուտքերը կազմել են 2726873.5 հազ. դրամ (ներառյալ 2010 թվականի առաջին կիսամյակի 230882.2 հազ. դրամի չափով կատարված ծախսերի գումարը), կամ պլանավորված ցուցանիշը կատարվել է 103.6%-ով, ավել 95473.5 հազ. դրամով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ վճարի գծով մուտքերն աճել են 5.9%-ով կամ 151656.0 հազ. դրամով: Աճը հիմնականում պայմանավորված է անհատ ձեռնարկատերերի կողմից հայտարարագրվող պարտադիր սոցիալական ապահովության վճարներով հարկվող տարեկան եկամուտների աճով, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանում հարկ վճարողների կողմից հայտարարագրվող միջին աշխատավարձերի աճով:

Հարկային եկամուտներ



ԸՆԴԴԵՄ ԱՆՈՐԱԿ ԽՄԻՉՔՆԵՐԻ՝

«ԱԿՅԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ

Շուկայում հայտնված էժան ու անորակ ալկոհոլային խմիչքների անօրինական շրջանառությունը կանխելու, ինչպես նաև ԼՂՀ-ում արտադրվող ալկոհոլային խմիչքների մասով հարկային մարմինների կողմից օպերատիվ հսկողություն իրականացնելու նպատակով, փոփոխություններ են կատարվել «Ակցիզային հարկի մասին» օրենքում:

Մասնավորապես, շալցված սպիրտի և սպիրտային խմիչքների համար սահմանվել է իրացման նվազագույն գին:

ԼՂՀ տարածքում արտադրվող և ԼՂՀ տարածք ներմուծվող՝ ԱՏԳ ԱԱ 2203, 2206, 2207, 2208 /բացառությամբ 220820120 ծածկագրին դասվող ապրանքի/ և 2402 ծածկագրերին դասվող ապրանքների պահպանման, հարկ

վճարողի մանրածախ առևտրի կետ կամ ակցիզային պահեստ տեղափոխման (ներառյալ՝ գնորդներին հանձնման) դեպքերում կիրառվում է «ակցիզային պահեստ» ռեժիմը: 



«ԿԱՆԱԶ ԼՈՒՅՍ»՝

ԱՐՑԱԽԻ ԳՈՐԳԱԳՈՐԾՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Փոփոխվել է «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքը

Այսուհետ Արցախում արտադրվող ձեռագործ գորգերի իրացումն ազատվելու է ավելացված արժեքի հարկից. «Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքում կատարվել են փոփոխություններ: Այդ-

պիսով, բնականաբար, բարենպաստ պայմաններ կստեղծեն տվյալ արհեստով զբաղվող տնտեսվարող սուբյեկտների համար, ինչն էլ կծառայի ճյուղի զարգացմանն ու դրանով զբաղվողների քանակի ավելացմանը: 

ԱՌԱՆՅ ԱԱՀ-Ի ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ՝ ԱՐՑԱԽԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ

Օրենքի մյուս փոփոխությամբ արտոնություններ են սահմանվել զբոսաշրջային ծառայությունների մասով. Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին մատուցվող զբոսաշրջային ծառայությունները, ինչպես նաև զբոսաշրջային գործակալությունների կողմից մատուցվող գործակալական ծառայություններն ազատվում են ավելացված արժեքի

հարկից, եթե այդ ծառայությունների շրջանակներում ուղևորությունները, ճանապարհորդությունները, էքսկուրսիաները իրականացվում են Արցախի տարածքում:

«Վ իճակախաղերի մասին» և «Հաստատագրված վճարների մասին» ԼՂՀ օրենքներում կատարված փոփոխությունների համաձայն՝ 2010թ.-ի հուլիսի 1-ից ԼՂՀ տարածքում

արգելվել է տոտալիզատորի և ինտերնետ տոտալիզատորի (այդ թվում՝ անմիջականորեն խաղասրահում) կազմակերպումը և դադարեցվել են հաստատագրված վճարներով հարկման դրույթները: 

Artsakh Fruit



«Արցախ ֆրուիթ» ՓԲԸ

ԼՂՀ ք. Ստեփանակերտ, փ. Մելիքաձան 25
հեռ.՝ (+37447) 972299, ֆաքս՝ (+37447) 972099
arfruit@yahoo.com, www.artsakhfruit.com

**Հասարակության
յուրաքանչյուր
անդամի մոտ պետք է
ձևավորվի այն
գիտակցությունը,
որ գնված ապրանքի
դիմաց պահանջելով
կտրոն՝ անուղղակի
կերպով կնպաստի
հանրապետությունում
տնտեսական ու սոցիա-
լական առաջընթացի
խթանմանը, աշխատա-
վարձերի, կենսաթո-
շակների ու նպաստե-
րի ժամանակին
վճարմանը:**

Արցախում հսկիչ-դրամարկղային մեքե-
նաների ներդրման գործընթացը սկսվել
է դեռևս 10 տարի առաջ՝ ԼՂՀ կառավա-
րության որոշմամբ: Սկզբնական
շրջանում ՀԴՄ-ների ներդր-
ման վերաբերյալ որոշու-
մը տարածվում էր 30քմ
առևտրական տարած-
քը գերազանցող խա-
նութների, խաղատ-
ների, շահումով խա-
ղերի, բաղնիքների և
ցնցուղարանների, հան-
րային սննդի կազմակեր-
պման, բենզինի, դիզելային
վառելիքի մանրածախ վաճառ-
քի ոլորտների վրա:

Ավելի ուշ՝ 2005թ.-ին, գործողության
մեջ է մտել «Հսկիչ-դրամարկղային
մեքենաների կիրառման մասին» ԼՂՀ

2011թ.-ի հունվարի 1-ը: Այսօր ՀԴՄ-ներ
ներդրված են հանրային սննդի, խաղատ-
ների, շահումով խաղերի, բաղնիք-
ների և ցնցուղարանների, երկու
և ավելի աշխատատեղով
գեղեցկության սրահների,
ավտոտրանսպորտա-
յին միջոցների տեխնի-
կական սպասարկման
համար հարմարեց-
ված երկու և ավելի աշ-
խատատեղերով ավ-
տոտեխսպասարկման
կայանների, ինտերնետ
ակումբների, բենզինի, դի-
զելային վառելիքի և բնական
ու հեղուկ գազի վաճառքի, հյուրանո-
ցային ծառայությունների մատուցման,
խանութների միջոցով իրականացվող
առևտրական գործունեության, դեղատ-
նային, արտարժույթի առք ու վաճառքի,

**Պետության
ցանկացած քայլ,
բնականաբար, հնա-
րավոր է հաջողությամբ
իրագործել միայն հա-
սարակության աջակ-
ցությամբ:**

ՀԴՄ-ՆԵՐԸ

10 ՏԱՐԻ ԱՌԱՋ ԵՎ ԱՅՍՕՐ

օրենքը, որը կանոնակարգում է հսկիչ-
դրամարկղային մեքենաների ներդր-
ման, օգտագործման, գրանցման և
հաշվառման հետ կապված հարցե-
րը: Իսկ 2008-ից արդեն հսկիչ-դրա-
մարկղային մեքենաների շահա-
գործման կանոնների խախտում-
ներ թույլ տված տնտեսվարող
սուբյեկտների նկատմամբ
սկսվում է կիրառվել նաև
գործունեության կասեցման
համակարգը:

Հանրապետությունում ՀԴՄ-
ների ներդրման գործընթացն
ընդգրկում է մի քանի փուլ և
նախատեսվում է այն լիար-
ժեք ավարտին հասցնել մինչև

մարզաառողջարանային համալիրնե-
րի, հանգստյան տների, հիվանդանոց-
ների ու ամբուլատոր բուժփմնարկների
կողմից ծառայությունների մատուցման
և այլ ոլորտներում:

Ընդհանուր առմամբ, 2010թ.-ի օգոստո-
սի 1-ի դրությամբ հարկային մարմնում
գրանցված է 3422 հսկիչ-դրամարկղա-
յին մեքենա, որից 1884-ը՝ Ստեփանա-
կերտում:

ՀԴՄ-ների ներդրումն ինքնանպատակ
չէ. դրա անհրաժեշտությունը պայմանա-
վորված է մի շարք հանգամանքներով:
Առաջին հերթին դրանք նախատեսված
են առևտրի և սպասարկման ոլորտնե-
րում գնորդների հետ կատարվող դրա-



մահաշվարկային գործարքների իրականացման փաստի հաստատման և դրանով իսկ՝ ստվերային տնտեսության կրճատման համար: Այդ առումով հարկային մարմինը հետևողական աշխատանքներ է տանում հսկիչ-դրամարկղային մե-

վերահսկման առումով, բացի պետական ներգործության մեխանիզմներից, անհրաժեշտ է նաև վերջնական սպառող ֆիզիկական անձանց աջակ-

Ուզո՞ւմ եք բարձր կենսաթոշակ և աշխատավարձ

Ուրեմն պահանջեք ձեր կտրոնը

քենաների կիրառման կանոնների խախտումների դեմ, որի արդյունքում զգալի շրջանառություն դուրս է բերվել ստվերից:

ԱՐԴՅՈՒՆՔ

2008 թվականին առևտրի հարկի մատով պետական բյուջե է մուտքագրվել 1 մլրդ 97 մլն դրամ՝ կազմելով 2007-ի ցուցանիշի 218.6%-ը կամ ավել 595 մլն դրամով: 2009-ին մուտքագրվել է 1 մլրդ 222 մլն դրամ՝ կազմելով 2008 թ. ցուցանիշի 111.3%-ը կամ ավել մոտ 125 մլն դրամով: Համապատասխանաբար իրացման շրջանառությունները կազմել են 2008-ին՝ 41 մլրդ 200 մլն դրամ՝ 2007-ի 20 մլրդ 380 մլն դրամի դիմաց, իսկ 2009-ին՝ 46 մլրդ 685 մլն դրամ:


Պետության ցանկացած քայլ, բնականաբար, հնարավոր է հաջողությամբ իրագործել միայն հասարակության աջակցությամբ: Տնտեսվարող սուբյեկտների իրական եկամուտների և իրացման շրջանառությունների

ցույցում, քանի որ այս դեպքում հնարավորություն է ստեղծվում առանց տնտեսվարող սուբյեկտների բնականոն գործունեությանը միջամտելու, ազդել իրացման իրա-

կան շրջանառություններ արձանագրելուն: Այդ առումով հարկայինը նախատեսում է ակտիվացնել ՀՂՄ-ների շահագործման կանոնների պահպանման ուղղված լուսաբանման, քարոզչական աշխատանքները: Հասարակության յուրաքանչյուր անդամի մոտ պետք է ձևավորվի այն գիտակցությունը, որ գնված ապրանքի դիմաց պահանջելով կտրոն՝ անուղակի կերպով կնպաստի հանրապետությունում տնտեսական ու սոցիալական առաջընթացի խթանմանը, աշխատավարձերի, կենսաթոշակների ու նպաստների ժամանակին վճարմանը: Բացի այդ, ՀՂՄ-ների կիրառումը բերում է նաև սպասարկման մակարդակի բարձրացմանն ու այդ աշխատանքների ավտոմատացմանը: 

2008-ին կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ճշտության 344 ստուգում: Արդյունքում 151 սուբյեկտ տուգանվել է առաջին անգամ, 18 սուբյեկտի գործունեությունը կասեցվել է 5-ական օրով, 4 սուբյեկտներին՝ 10-ական օրով: 2009 թ.-ին կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ճշտության 119 ստուգում. 86 սուբյեկտներ տուգանվել են առաջին անգամ, 12 սուբյեկտների գործունեությունը կասեցվել է 5-ական օրով, 3 սուբյեկտներին՝ 10-ական օրով: Իսկ այս տարվա առաջին կիսամյակում կատարվել է 41 ստուգում. առաջին անգամ տուգանքի ենթարկված սուբյեկտների թիվը 30 է, իսկ 5 օրով գործունեությունը կասեցված սուբյեկտները 6-ն են:





ՇՈՒՇԻ

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ՝ ՎԵՐԱԾՆՎՈՂ ՇՈՒՇԻ.

Անցյալն ապագայում

Հարուստ պատմությամբ մեր Շուշին այսօր ամեն ինչի կարիք ունի. չկա որևէ ծրագիր, որ այդտեղ ավելորդ լինի: Խնդիրները շատ են, և երկրի իշխանություններն ու աշխարհասփյուռ հայությունը վճռական են՝ մեր հպարտությունը պետք է նոր բարձունքներ նվաճի, պետք է վերակառուցվի, վերածնվի և առաջ գնա: Այս վճռականությունն այսօր իր շուրջ է համախմբել գործարարներին և բարեգործներին՝ Արցախից, Հայաստանից, Սփյուռքից, ովքեր ուզում են թույլ տալ առաջ վերածնված տեսնել մեր բերդաքաղաքը, որտեղ երեխաները չեն զգա պատերազմի շունչը, մաքուր ջուր խմելու և բարեկարգ դպրոցում, ԲՈՒՀ-ում սովորելու հնարավորություն կունենան՝ հետագայում համալրե-

լով մի շարք հեղինակավոր շուշեցիների շարքերը: Դրա համար անհրաժեշտ թիվ մեկ նախադրյալն այսօր կա՝ արցախցին տալանդավոր է և հզոր ներուժ ունի: Մնում է միայն, որ յուրաքանչյուր հայ, առավել ևս՝ գործարար, իր պարտքը համարի ուժերի ներածին չափով օժանդակել և մասնակցել այդ պատվավոր գործին՝ մեր բերդաքաղաքի վերականգնմանը, որը մեր հաղթանակների սկիզբը դարձավ...

Շուշիի հարկատուները գիտակցում են՝ իրենց հարազատ քաղաքի վերածննդի գործում իրենց դերը մեծ է: Իրենցից ուղղակի պահանջվում է լինել կարգապահ և պարտաճանաչ. իրենց կատարած վճարումներով մեկ քար էլ կավելանա...



- Պարոն Լալայան, ինչպիսի՞ն է Շուշիի շրջանի հարկային տեսչության աշխատանքային օրը:

- Մեր աշխատանքային օրերը, կարելի է ասել, և՛ միանման են, և՛ տարբեր:

Յուրաքանչյուր աշխատակից գիտի իր անելիքը: Աշխատանքային օրը, որպես կանոն, սկսում ենք խորհրդակցությամբ: Պատասխանատու աշխատակիցները ներկայացնում են օրվա անելիքները, տրվում են համապատասխան հանձնարարականներ և հրահանգներ:

Ձգտում ենք մեր ամենօրյա գործունեությամբ նոր ձեռքբերումներ արձանագրել ինչպես տեսչության, այնպես էլ ամբողջ շրջանի համար: Շուշիում իրականացվող վերականգնողական աշխատանքները՝ առողջապահական, կրթական եւ մշակութային օբյեկտների, ճանապարհային ենթակառուցվածքների շինարարական աշխատանքները, շրջանի զարգացման նոր հեռանկարներ են բացում՝ այն դարձնելով գրավիչ նաև բիզնեսի տեսանկյունից:

Այս ամենն, իհարկե, մեզանից աշխատանքի նոր որակ է պահանջում, ինչին մենք կարողանում ենք հասնել տեսչության աշխատակիցների համախմբվածության շնորհիվ: Եվ մենք առաջնորդվում ենք հետևյալ նշանաբանով՝ միահամուռ ուժերով ձգտել առավելագույնին և ամեն օր աշխատել նորովի:

-Ո՞ր ոլորտներն են ներկայացնում Շուշիի հարկ վճարողները:

-Մեր հարկատուների 36%-ը ներգրավված է առևտրի ոլորտում: Ունենք նաև շինարարության, սպասարկման և այլ ոլորտներում ընդգրկված հարկ վճարողներ: Շուշիում գործում են նաև հյուրանոցային և հանգստի գոտիներ, ունենք վերականգնված արևելյան բաղնիք, որն արևելյան, պարսկական, թուրքական ու

«Մեր հարկատուները շատ կարգապահ են. դա ավելի է թեթևացնում մեր աշխատանքը»

Արձանագրում է ԼՂՀ Շուշիի շրջանի հարկային տեսչության պետ Վիտալիկ Լալայանը



1 ՕՐ ՇՈՒՇԻԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ

2 կա Շուշիում գործող մի հարկատու, ով շրջանի տեսչության դիտակետից դուրս է. հարկահավաքներին բոլորն են հայտնի: Հետևաբար սպասարկման և վերահսկողական գործընթացների կազմակերպումն էլ բարդ չէ՝ ամեն ինչ տեսանելի է: «Ոչ մի խախտում չի վրիպում տեսչության աշխատակիցների տեսադաշտից», - սա յուրաքանչյուր շուշեցու համոզմունքն է, ով շտապում է հավելել. «Տեսչության աշխատակիցները շատ հարգալից են իրենց հարկատուների նկատմամբ և միշտ ձգտում են աջակցել»: Շուշիի հարկայինը ժա-

մանակից հետ չի մնում, ավելին՝ մշտապես ձգտում է նորամուծություններով զարմացնել հարկ վճարողներին՝ առաջնորդվելով հիմնական սկզբունքով՝ «Մեր հարկատուն վաստակել է քաղաքակիրթ պայմաններում սպասարկվելու իրավունքը»: ...Ամեն ինչ սկսվում է հենց մուտքից. հարկատուների վստահությունը ձեռք բերելու նպատակով մուտքի մոտ փակցված է կենտրոնական ապարատում գործող «թեժ գծի» հեռախոսահամարը. եթե հարկատուն գտնում է, որ իր իրավունքները տեսչությունում ոտնահարվել են, ունի խորհրդատվության կարիք այս կամ այն խնդրի վերաբերյալ, ապա «թեժ գծի» մասնագետը միշտ իր տրամադրության տակ է:

Շուշիի շրջանի հարկային տեսչությունը գործում է 1998թ-ից: Սպասարկվող հարկ վճարողների քանակով այն ամենափոքրն է: Տեսչությունում հաշվառված հարկ վճարողները 306-ն են, որոնցից փաստացի գործում են 131-ը:



արաբական բաղնիքների ավանդույթների համադրման նմուշ է, գործում է նաև Շուշիի վերակառուցված շուկան՝ պահպանելով հին արևելյան ճարտարապետական ոճը: Կառուցման փուլում է նաև արվեստի թանգարանը: Մի խոսքով, արագ զարգացման տեմպեր ունեն շինարարության, զբոսաշրջության, կրթության և մշակույթի ոլորտները. այս հարցում ևս զգացվում է պետության ակտիվ միջամտությունն ու աջակցությունը, էական նշանակություն ունեն «Հայաստան» համահայկական հիմնադրամի հանգանակությունները, տեղացի և օտարերկրյա ներդրողների և ձեռներեցների ակտիվ միջամտությունը:

- Իսկ, ընդհանուր առմամբ, ինչպե՞ս է կազմակերպվում հարկ վճարողների սպասարկման գործընթացը:

- Հարկ վճարող-հարկային մարմին փոխհարաբերություններում հիմնական շփման օղակը ձևավորվում է հարկ վճարողների սպասարկման ժամանակ: Մենք գիտակցում ենք, որ ցանկալի արդյունքի կարող ենք հասնել՝ առաջին հերթին հարկ վճարողների հետ

Ամսական կտրվածքով շրջանն ապահովում է շուրջ 19.2մլն դրամ հարկային եկամուտներ, պետական տուրքեր և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ, ինչը կազմում է ԼՂՀ ընդհանուր հարկային եկամուտների, պետական տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով կատարողականի 1.2 տոկոսը:

սերտ գործընկերային միջավայր ձևավորելով, իսկ դրա նախապայմանն էլ որակյալ սպասարկումն ու բարեկիրթ պահվածքն է: Կարծում եմ, տեսչություն-

նում այսօր ստեղծված են անհրաժեշտ բոլոր աշխատանքային պայմանները հարկ վճարողների սպասարկումն օպերատիվ և որակով կազմակերպելու համար: Քանի որ սպասարկվող հարկ վճարողների թիվն այդքան էլ մեծ չէ, մենք հնարավորություն ունենք հաշվարկ-հաշվետվությունների ընդունման ժամանակ միանգամից առաջարկել հարկ վճարողներին կատարել ճշտումներ, ինչը հետագայում նրանց գերծ է պահում տույժ-տուգանքներից: Հարկ վճարողների հետ ակտիվ է նաև տեղեկատվական կապը. հասցնում ենք անհատական բացատրական աշխատանքներ տանել բոլոր հարկատուների հետ: Մասնավորապես ուզում եմ ընդգծել

մեր հարկատուների կարգապահ լինելը. նրանք շատ պարտաճանաչ և բարեխիղճ են, ինչն ավելի է թեթևացնում մեր աշխատանքը:



Շուշիում համեմատաբար զարգացած է շինարարությունը. այսօր քաղաքում կառուցվում են հյուրանոցներ, ռեստորաններ, շուկա, բազմաբնակարան շենքեր և առանձնատներ: Հետ չի մնում նաև գյուղատնտեսությունը՝ կարտոֆիլի արտադրությամբ, անասնապահությամբ, նաև տուրիզմը. ամեն տարի Շուշի են այցելում ավելի քան 5000 օտարերկրյա տուրիստներ, ինչպես նաև հազարավոր ներքին զբոսաշրջիկներ, սակայն տուրիզմը սպասարկող ձեռնարկությունները դեռևս զարգանալու տեղ ունեն:

Շուշին հայտնի էր որպես ուսումնակրթական կենտրոն և մշակութային հարուստ ավանդույթներով քաղաք: Այն, իրավամբ, հավակնում է հայության մշակութային մայրաքաղաքի կարգավիճակին:

«Արդեն կիրառում ենք մրցույթների կազմակերպման համակարգչային տարբերակը, որի արդյունքում նվազել է մարդկային գործոնի միջամտության հավանականությունը՝ գործընթացը դարձնելով առավել թափանցիկ»

Հայտարարում է Մրցութային և ատեստավորման հանձնաժողովի նախագահ Արթուր Հարությունյանը





ՊԱՇՏՈՆՆԵՐ՝ ԱՌԱՆՅ ԾԱՆՈԹԻ.

ԴԻՄՈՐԴԻ ՄԻՋՆՈՐԴԸ ԳԻՏԵԼԻՔՆ Է, ԳՆԱՅԱՏՈՂԸ՝ ՀԱՄԱԿԱՐԳԻՉԸ

- Պարոն Հարությունյան, որքանով է այսօր քաղաքացիների համար մատչելի հարկային ծառայությունում պաշտոն զբաղեցնելը:

- «Հարկային ծառայության մասին» ԼՂՀ օրենքի համաձայն՝ հարկային ծառայության գլխավոր, առաջատար և կրտսեր պաշտոնների զբաղեցումը կատարվում է մրցութային կարգով: Մասնավորապես, հարկային ծառայության կրտսեր պաշտոններ զբաղեցնելու համար հայտարարվում է բաց մրցույթ, իսկ գլխավոր և առաջատար պաշտոնների համար՝ փակ մրցույթ: Մրցույթներն անցկացվում են թեստավորման և հարցազրույցի միջոցով:

Միանշանակ, կարող եմ ասել, որ մրցույթները կազմակերպվում են օբյեկտիվ և բոլոր դիմորդների համար ապահովվում են հարկային ծառայության պաշտոնների զբաղեցման հավասար հնարա-

վորություններ՝ իրենց մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին համապատասխան: Նշեմ նաև, որ այս տարվանից կիրառում ենք մրցույթների կազմակերպման համակարգային տարբերակը, որի արդյունքում նվազել է մարդկային գործոնի միջամտության հավանականությունը՝ գործընթացը դարձնելով առավել թափանցիկ:

- Իսկ ի՞նչ մակարդակի վրա է դիմորդների մասնագիտական պատրաստվածությունը:

- Ցավոք, մրցույթի արդյունքներն այդ առումով մեզ չեն գոհացնում. դիմորդների մաս-

Դիմորդների մասնագիտական պատրաստվածությունն այդքան էլ բարձր մակարդակի վրա չէ, ինչի հետևանքով կադրային բազայի համալրումը դժվարանում է:

րանում է: Միաժամանակ պետք է նշեմ, որ նախորդ տարիների համեմատ պատկերը նկատի էլի որ են փոխվել է՝ դիմորդներն ավելի պատրաստված են. այդ մասին են վկայում նաև արձանագրված ցուցանիշները: Այսպես, այս տարվա առաջին կիսամյակում երկու մրցույթ է անցկացվել, որոնց մասնակցել է 58 դիմորդ և հաղթող է ճանաչվել 13-ը: 2009թ.-ին անցկացվել է 4 մրցույթ, որին մասնակցել է 113 քաղաքացի, հաղթող է ճանաչվել 17-ը: Առջևում դեռևս ունենք բաց և փակ մրցույթներ:

նագիտական պատրաստվածությունն այդքան էլ բարձր մակարդակի վրա չէ, ինչի հետևանքով կադրային բազայի

համալրումը դժվարանում է:

Կադրերի ընտրության ժամանակ կարևորում ենք մասնագիտական պատրաստվածությունը, ինքնակիրումն ու սերը աշխատանքի նկատմամբ, ընդհանուր նպատակին ձգտելու և հասնելու կամքը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում նաև մարդկային արժանիքներին, ազնվությանը, քաղցր մեր համակարգը մշտապես գործ ունի հենց հասարակության հետ, իսկ ծառայողի սխալ վարքագծի դրսևորման դեպքում խուսք անգամ չի կարող լինել հարկային մարմին-հարկատու առողջ հարաբերությունների մասին:

ԼՂՀ ԿԱ ՀՊԾ պետ Ա. Բալայան

Դիմորդների մասնագիտական պատրաստվածության բարձրացմանը նպաստել է նախնական հարցազրույցով պայմանագրային հիմունքներով աշխատանքի ներգրավման պրակտիկան: Նախատեսվում են նաև ստեղծել հարկային

նպատակով համակարգում պարբերաբար կազմակերպվում են նաև ատեստավորումներ: Ըստ տարիների ունենք հետևյալ պատկերը. 2008 թվականին համակարգում կազմակերպվել է 59 հարկային ծառայողների ատեստավորումներին, որից 2-ը վերապատրաստման արդյունքներով:

Միանշանակ ասել, որ համակարգն այսօր լիարժեք համալրված է գրագետ կադրերով, ճիշտ չէ: Հատկապես



ՇԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Հարկային ծառայողների մասնագիտական գիտելիքների, աշխատանքային ընդունակությունների կատարելագործման և արհեստավարժության ստուգման նպատակով ԼՂՀ ԿԱ հարկային պետական ծառայությունում ատեստավորումներ, ուսուցողական սեմինարներ, վերապատրաստման դասընթացներ կազմակերպվում են պարբերաբար: Այդ նպատակով վերջերս կազմակերպվել են ուսուցողական սեմինարներ՝ հարկ վճարողների սպասարկման գործառնություններ իրականացնող ստորաբաժանումների աշխատակիցների համար, որում ընդգրկվել են 39 հարկային ծառայողներ: Սեմինարները և՛ տեսական էին, և՛ գործնական: Կենտրոնական աշխատակազմի մասնագետների կողմից ներկայացվել են առանձին հարկատեսակների հաշվարկման ու վճարման հարաբերությունները, հարկային հաշվարկների լրացման կարգերը, ֆինանսական հաշվետվությունների կազմման ընդհանուր նկատառումները և այլն: Առաջիկայում նախատեսվում է նման դասընթացներ անցկացնել նաև վերահսկողական գործառնություններ իրականացնող հարկային ծառայողների համար:

ծառայության ուսումնական կետերում, որի միջոցով դիմորդները նախապես կպատրաստվեն մրցույթներին:

-Հարկային ծառայողների որակավորման ստուգումների առումով պատկերն ինչպիսի՞ն է: Ինչպիսի՞ արդյունքներ են արձանագրվում:

- Հարկային ծառայողների զբաղեցրած պաշտոններին համապատասխանությունը և ծառայողական առաջնահանգման նպատակահարմարությունը որոշելու

րում, որի արդյունքում զբաղեցրած պաշտոնին համապատասխանել են 24-ը, վերապատրաստման փուլ են անցել 22-ը, իսկ 13 հարկային ծառայողներ չեն համապատասխանել զբաղեցրած պաշտոններին:

2009-ին ատեստավորվել են 24 հարկային ծառայողներ, որոնցից 9-ը համապատասխանել են զբաղեցրած պաշտոններին, 11-ն անցել են վերապատրաստման փուլ, իսկ 4 հարկային ծառայողներ չեն համապատասխանել զբաղեցրած պաշ-

խնդիրներ ունենք շրջանների որոշ տեսչություններում, որտեղ կադրերի մասնագիտական պատրաստվածության պակաս է զգացվում: Այս առումով կենտրոնական աշխատակազմի մասնագետների կողմից պարբերաբար կազմակերպվում են ուսուցողական սեմինարներ, վերապատրաստման դասընթացներ: Մեր կադրերին հնարավորություն է տրվում մասնակցել նաև ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեի կողմից կազմակերպվող ուսումնական դասընթացներին: Այսպես, վերջերս համակարգի 4 աշխատակիցներ մասնակցել են ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեի կողմից կազմակերպված «Հարկ վճարողների սպասարկում» թեմայով ուսումնական դասընթացին:

Այս տարվանից կիրառում ենք մրցույթների կազմակերպման համակարգչային տարբերակը, որի արդյունքում նվազել է մարդկային գործոնի միջամտության հավանականությունը՝ գործընթացը դարձնելով առավել թափանցիկ:



ՄՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ ՓԲԸ



Մեր պապերը խմում էին
Արցախ աշխարհի լավագույն գինիները,
որի ավանդույթը վերականգնվել է այսօր

20 10Թ.-Ի ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ 100 ԽՈՇՈՐՆԵՐԸ ՊԵՏԲՅՈՒՋԵ ԵՆ ՓՈԽԱՆՅԵԼ 5.7ՄԼՐԴ ԴՐԱՄ



20 10Թ.

առաջին կիսամյակի ընթացքում ԼՂՀ 100 խոշոր հարկ վճարողների կողմից վճարված հարկերի, տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գումարը կազմել է 5.7մլրդ դրամ: Դա ԼՂՀ պետբյուջեի հարկային եկամուտների, պետական տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների ընդհանուր մուտքերի 60.4%-ն է: Նկատենք, որ 2009թ. առաջին կիսամյակի ընթացքում 100 խոշոր հարկ վճարողների վճարած հարկերի, տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների ընդհանուր գումարը կազմել էր շուրջ 4.5մլրդ դրամ, այսինքն՝ ընդհանուր մուտքերի 55.3%-ը:



ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎԱՍՏՈՒՏՆԵՐԻ, ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳՐԵԹԵ 60.4 ՏՈԿՈՍՆ ԱՊԱՀՈՎԵԼ ԵՆ 100 ԽՈՇՈՐՆԵՐԸ

Ըստ 100 խոշոր հարկ վճարողների կողմից հայտարարագրված՝ պետական բյուջե հաշվարկված և վճարված հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների ցուցանիշի մեծության՝ նկատվել է աճի միտում: Այսպես, եթե 2009թ. առաջին կիսամյակում հաշվարկված հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների ցուցանիշը կազմել էր 4.9 մլրդ, ապա 2010-ի նույն ժամանակահատվածում խոսքը 6.1 մլրդ դրամի մասին է: Իսկ վճարված հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների ցուցանիշը 2010թ.-ի առաջին կիսամյակում՝ 2009թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ, աճել է 1.2 մլրդ դրամով կամ 26.7%-ով և կազմել է 5.7 մլրդ դրամ:

100 խոշոր հարկատուների վճարած հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ 2009թ. և 2010թ. առաջին կիսամյակներում ունեցել է հետևյալ պատկերը. եթե 2009թ. հունվար-հունիս ամիսներին այն կազմել է ընդհանուրի 55.3%-ը, ապա 2010թ.-ին՝ 60.4%-ը:

100 խոշոր հարկ վճարողների կողմից հայտարարագրված աշխատողների միջին ամսական ցուցակային թվի և աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների ցուցանիշների մասով 2010թ. առաջին կիսամյակում նկատվել է աճի միտում՝ նախորդ տարվա համեմատ: Աշխատողների միջին ամսական ցուցակային թիվը 2009թ. առաջին կիսամյակում կազմել էր 8493 մարդ, 2010թ.-ին՝ 8729 մարդ, իսկ աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների ցուցանիշը 2009 և 2010թթ. առաջին կիսամյակների կտրվածքով համապատասխանաբար կազմել է 4.6 մլրդ և 5.4 մլրդ դրամ: Միջին ամսական աշխատավարձը 2009թ.

առաջին կիսամյակում կազմել է 90.6 հազար դրամ, իսկ 2010թ. առաջին կիսամյակում՝ 104 հազար դրամ, այն դեպքում, երբ ընդհանուր միջին ամսական աշխատավարձը 2009թ. առաջին կիսամյակում կազմել էր 71.3 հազար դրամ, իսկ 2010թ. առաջին կիսամյակում՝ 75.2 հազար դրամ:

100 ԽՈՇՈՐՆԵՐԻ ԱՌԱՋԱՏԱՐԸ ԴԱՐՁՅԱԼ «ԲԵՅՁ ՄԵԹՃԼՍ»-Ն Է

100 խոշորների ցանկը, ինչպես 2009թ. առաջին կիսամյակի, այնպես էլ այս տարվա հունվար-հունիս ամիսների ընթացքում գլխավորել է «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ն:

100 խոշորների ցանկը, ինչպես 2009թ. առաջին կիսամյակի, այնպես էլ այս տարվա հունվար-հունիս ամիսների ընթացքում գլխավորել է «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ն: Այդ ժամանակահատվածներում ընկերության կողմից վճարվել են համապատասխանաբար 1 մլրդ և 1.7 մլրդ դրամ հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ:

թացքում գլխավորել է «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ն: Այդ ժամանակահատվածներում ընկերության կողմից վճարվել են համապատասխանաբար 1 մլրդ և 1.7 մլրդ դրամ հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ: Ընդ որում, ինչպես նկատեցիք, թիվ մեկ հարկատուին հաջողվել է 2010թ. առաջին կիսամյակում բավականին լավ արդյունք արձանագրել նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

«ԱՐՑԱԽԵՆԵՐԳՈ»-Ն ՉԻՋԵԼ Է ԴԻՐՔԵՐԸ «ԱՐՑԱԽԳԱՉ»-ԻՆ

Ինչ վերաբերում է առաջին եռյակին, ապա «Բեյզ Մեթըլս»-ին հաջորդում են «Ղարաբաղ Տեխնոլոգի»-ն և «Արցախ-գազ»-ը: Այսինքն՝ նախորդ տարվա հա-

մեմատությամբ TOP եռյակում ընդգրկված «Արցախէներգո» ՓԲԸ-ն այս տարի զիջել է «Արցախգազ» ՓԲԸ-ին: Երեք խոշոր հարկ վճարողների կողմից նախորդ տարվա առաջին կիսամյակում պետբյուջե էին փոխանցվել 1.9 մլրդ դրամ հարկային եկամուտներ, պետական տուրքեր և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ, այսինքն՝ պետբյուջեի հարկային եկամուտների, պետական տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների 23.6%-ն ապահովել էին 3 խոշորները: Այս տարվա առաջին կիսամյակում այդ ցուցանիշն ավելի բարձր է՝ 2.8 մլրդ դրամ կամ պետբյուջեի հարկային եկամուտների, պետական տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների 30.1%-ը:

ԽՈՇՈՐ ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԸ՝ ԸՍՏ ԻՐԵՆՑ ԻՐԱՑՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ

2010թ. առաջին կիսամյակում ըստ ծավալի 100 խոշոր հարկ վճարողների ցուցանիշների պատկերը հետևյալն է. եթե հարկ վճարողների կողմից հայտարարագրված իրացման ծավալի ցուցանիշը (առանց ԱԱՀ-ի) 2009թ. հունվար-հունիս ամիսներին շուրջ 37.7 մլրդ դրամ էր, ապա 2010թ. առաջին կիսամյակում այն կազմել է 48 մլրդ դրամ: Իսկ դա նշանակում է, որ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ իրացման ծավալի աճ է արձանագրվել՝ 10.3 մլրդ դրամով կամ 27.3%-ով:

Հարկ վճարողների կողմից հայտարարագրված իրացման ծավալի ցուցանիշի մասին (առանց ԱԱՀ-ի) առավել պարզ պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է դիտարկել նաև 100 խոշոր հարկատուների իրացման ծավալի տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ. եթե 100 խոշոր հարկատուների իրացման ծավալը 2009թ. առաջին կիսամյակում կազմել է 37.7 մլրդ դրամ կամ ընդհանուրի 57.7%-ը, ապա 2010թ. նույն ժամանակահատվածում այն աճել է՝ կազմելով 48 մլրդ դրամ կամ 64.3%:



Առաջին 100 խոշոր հարկ վճարողների և նրանց կողմից վճարված հարկերի և տուրքերի մեծությունները

Գ/Գ	ՀՎՀՀ	Հարկ վճարողի անվանումը	Հարկ վճարողի գտնվելու վայրը	2010 Ֆինանսական տարվա հունվար-հունիս ամիսներին հարկ վճարողի կողմից ԼՂՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը /հազ.դրամ/				
				այդ թվում				
				Ընդամենը	ուղղակի հարկեր (այդ թվում՝ շահութահարկ, եկամտահարկ)	անուղղակի հարկեր (այդ թվում՝ ԱԱՀ, ակցիզային հարկ)	հաստատա գրված վճարներ	այլ հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ
1.	90016169	«Բեյզ Մեթըլս» ՓԲԸ	գ. Դրմբոն	1502382.9	113243.4	1061181.4		327958.1
2.	90015278	«Ղարաբաղ Տեյեկոմ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	662808.7	92547.9	550183.7		20077.1
3.	90010189	«Արցախգազ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	320718.6	13285.0	293508.0		13925.6
4.	90001386	«Արցախբանկ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	258272.9	248226.8	2858.1		7188.0
5.	90000186	«Արցախէներգո» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	171052.3	27302.3	120115.2		23634.8
6.	90071281	«Դորոժնիկ» ՍՊԸ	գ. Այգեստան	92600.0	43300.0	42475.0		6825.0
7.	90003442	«Կապավոր» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	86763.7	2369.6	84269.1		125.0
8.	90022272	«Ստեփանակերտի կոնյակի գործարան» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	77075.0		77050.0		25.0
9.	90026446	«Գլոբալ Հին» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	74312.3	22924.6	49481.9		1905.8
10.	90017188	«Պաստ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	61785.7	17391.6	42689.6		1704.5
11.	90025315	«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ	ք. Ստեփանակերտ	58816.8	53166.3			5650.5
12.	90070057	«Արցախ Բրենդի կոմպանի» ՓԲԸ	ք. Ասկերան	54968.1		54272.1		696.0
13.	90002165	«Վիրաժ» ԱԿ	ք. Ստեփանակերտ	50569.5	16998.4	31296.6		2274.5
14.	90013565	«Աշոց» ՍՊԸ	ք. Ասկերան	49912.9	17781.3	28186.9		3944.7
15.	90028183	«Հորիզոն թրեյդ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	44489.0	5116.0	37900.0		1473.0
16.	90213015	«Ավանգարդ» ՍՊԸ	ք. Մարտունի	37563.2	876.0	10063.2	2878.1	23745.9
17.	90026028	«Տեխմոնտաժ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	35389.8	5496.2	29247.0		646.6
18.	90018697	«Միկենա Էներգոպայզիս ԼԼԿ Արցախ կարի-կոշիկի արտ. միավ.» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	34783.2	27709.5	3982.9		3090.8
19.	90013144	«Պետրոլ սերվիս» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	32779.4	1510.4	49.8	29218.3	2000.9
20.	90213737	«Դորմագրոսերվիս» ՓԲԸ	ք. Մարտունի	32158.8	3617.5	27878.0		663.3
21.	90012365	«Զարավան» ՍՊԸ	գ. Բերքաձոր	31843.5	8252.3	21369.2		2222.0
22.	90003477	«Վերածնունդ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	29647.8	9354.9	19153.5		1139.4
23.	90015089	«Էրուդիտ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	26189.5	4769.5	21000.0		420.0
24.	90019907	«Արտադրական կոմբինատ - 3» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	25842.7	7807.2	16134.1		1901.4
25.	90022317	«Գրանդ կոմերց» ՍՊԸ Արցախի մասնաճյուղ	ք. Ստեփանակերտ	25612.5	1150.1			24462.4
26.	90020698	«ԱՏՐ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	25569.9	6293.6	18513.0		763.3
27.	90003261	«Խաչեն» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	24835.6	3551.5	19766.0		1518.1
28.	90020535	«Աշոտ երկաթ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	23608.8	7303.8	13752.3	1049.0	1503.7
29.	90008901	ԼՂՀ «Հանրային հեռուստառադիոընկերություն» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	23335.3	2836.0	20058.8		440.5
30.	90006038	«Զրային տնտեսություն» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	22933.9	4337.0	13791.6		4805.3
31.	90001705	«Օկեան» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	21399.5	681.0			20718.5
32.	90000324	ԼՂՀ Ոստիկանության պետական պահպանության վարչություն	ք. Ստեփանակերտ	21068.7	488.3	20074.0		506.4
33.	90009361	«Արցախճան ինստիտուտ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	20839.9	6247.8	13236.6		1355.5
34.	90018172	«Կապիտալ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	20117.9	351.3			19766.6
35.	90027079	«Պրիմա գրուպ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	19000.6	145.2		97.5	18757.9
36.	90212588	«Լուսակերտ» ՍՊԸ	ք. Մարտունի	18221.3	4812.0	10959.8		2449.5
37.	90073399	«Նարվա» ՓԲԸ	ք. Ասկերան	18143.9	1557.7	121.2	15926.0	539.0
38.	90025073	«Ամուր տանիք» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	17905.0	3465.0	14150.0		290.0
39.	90282605	«Հաքանդ» ՍՊԸ	գ. Տոդ	17194.5	3233.1	13196.2		765.2
40.	90015784	«Սերպանտին» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	16978.5	4087.5	12351.9		539.1
41.	90022248	«Բուրգ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	16368.7	6369.2	9488.9		510.6
42.	90024699	«Առանցք շին» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	15431.1	3521.8	4730.0		7179.3
43.	90013333	«Արցախերկսեմետ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	15267.9	13697.4			1570.5
44.	90025659	«Ատրիում» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	15198.3	9507.8	4000.0		1690.5
45.	90018654	«Ֆլեշ-պլուս» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	14960.0	1011.4	18.0	11638.7	2291.9
46.	90025813	«Տեխնոշին» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	14085.4	7308.0			6777.4
47.	90012812	«Ստեփանակերտ Սերվիս» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	14013.5	1461.2	4.8	11366.0	1181.5
48.	90019529	«Զի սթայլ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	13942.5	6022.0	7255.2		665.3
49.	90070246	«Սևան» ՍՊԸ	գ. Իվանյան	13857.8	581.3	339.6	11779.2	1157.7
50.	90018955	Ստեփանակերտի «Ագրոսերվիս» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	13675.5	2465.6	10904.5		305.4



Առաջին 100 խոշոր հարկ վճարողների և նրանց կողմից վճարված հարկերի և տուրքերի մեծությունները

Գ/Գ	ՀՎՀՀ	Հարկ վճարողի անվանումը	Հարկ վճարողի գտնվելու վայրը	2010 Ֆինանսական տարվա հունվար-հունիս ամիսներին հարկ վճարողի կողմից ԼՂՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը /հազ.դրամ/				
				այդ թվում				
				Ընդամենը	ուղղակի հարկեր (այդ թվում՝ շահութահարկ, եկամտահարկ)	անուղղակի հարկեր (այդ թվում՝ ԱԱՀ, ակցիզային հարկ)	հաստատա գրված վճարներ	այլ հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ
51.	90025118	«Ստրոյ Սիտի» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	13308.2	4427.5	8425.3		455.4
52.	90003237	«Բերդ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	13270.2	12958.4			311.8
53.	90004685	«Շինհարթակ» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	13239.2	1918.6	10948.1		372.5
54.	90022299	«Հրայր» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	13000.0				13000.0
55.	90018886	«Գնատ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	12693.4	257.0			12436.4
56.	90016787	«Սիզմա գրուպ սերվիս» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	12684.6	9777.4	1240.2		1667.0
57.	90014336	«Պրոգրես» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	12440.8	3588.1	8597.0		255.7
58.	90026686	«Գաղտնիք» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	12367.6				12367.6
59.	90023576	«Ֆոր Դիբելշն» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	12366.5	6292.8		2009.6	4064.1
60.	90281903	«Պարզ» ՍՊԸ	ք.Հաղրուբ	12306.7	8387.2	3376.5		543.0
61.	90020724	«Հիմք» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	12192.0	1850.0	10000.0		342.0
62.	90026704	«Վերանորոգման, շինարարության տնտեսություն» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	12124.3	2924.8	8713.8		485.7
63.	90012099	«Ֆարմսերվիս» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	11922.9	3246.7	7237.4		1438.8
64.	90000143	«Արդյունաբերական շինարարական կոմբինատ թիվ 1» ԲԲԸ	գ.Բերքաձոր	11683.5	3433.9	7606.0		643.6
65.	90026025	«Երեքնուկ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	10893.0	56.0			10837.0
66.	90024957	«Շինվեր պլուս» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	10879.2	9627.9			1251.3
67.	90001945	«Կոնտրակտ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	10875.8	1352.7	9287.0		236.1
68.	90019228	«Օմեգա գրուպ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	10521.1	155.9		8500.0	1865.2
69.	90012322	«Բնակարանային շահագործման տնտեսություն» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	10518.6	1963.3	8183.0		372.3
70.	90017582	«Մերկուրի» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	10331.1	961.9			9369.2
71.	90003099	«SBS» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	10322.5	1042.1			9280.4
72.	90014541	«Դիզակ պլուս» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	10269.0	3120.0	6235.6		913.4
73.	90002698	«Արցախկապ» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	10153.1	2241.3	6909.0		1002.8
74.	90005946	«Ֆրեդոն» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	9681.3	463.0			9218.3
75.	90010884	«Էլիտա 1» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	9629.5	1468.4	7402.7		758.4
76.	90015123	Ակ.Թախթաջյանի անվ. «Բուսաբանական այգի» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	9600.7	1152.7	8303.0		145.0
77.	90414369	ա/ծԱղդասարյան Արմեն	ք.Ստեփանակերտ	9561.1	322.7			9238.4
78.	90001138	«Մեխտրանպորտ» ԱԿ	ք.Ստեփանակերտ	9501.3	2376.1	6659.0		466.2
79.	90018209	«Դելտա-Ա» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	9440.8	1431.0	7807.9		201.9
80.	90012176	«Վարարակն» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	9363.0	2478.6	6575.7		308.7
81.	90212476	«Ստարտ պլուս» ՍՊԸ	գ.Սարգսաշեն	9037.3	4228.0	800.0	752.0	3257.3
82.	90027105	«Նավգա» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	8743.3	2234.0	6066.3		443.0
83.	90018095	«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ Ստեփանակերտի մասնաճյուղ	ք.Ստեփանակերտ	8404.9	2772.7	4161.0		1471.2
84.	90012064	«Բարի հոգի» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	8317.3	467.3			7850.0
85.	90000298	«Զերմային տնտեսություն» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	8251.7	920.2	6817.1		514.4
86.	90001559	«Նորայր եւ Հրայր եղբայրներ» ԱԿ	ք.Ստեփանակերտ	8245.9	73.1			8172.8
87.	90002519	«Միրաժ» ԱԿ	ք.Ստեփանակերտ	8079.2	949.5	893.6		6236.1
88.	90001833	«Արցախփոստ» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	7969.8	2434.2	4450.0		1085.6
89.	90023765	«Սեար գրուպ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	7897.0	57.0			7840.0
90.	90025297	«Արեգակ» ունիվերսալ վարկային կազմակերպություն Ստեփ. մաս.	ք.Ստեփանակերտ	7832.6	919.6	6533.0		380.0
91.	90142866	«Բարձունք» ՍՊԸ	ք.Մարտակերտ	7794.7	823.8	6592.5		378.4
92.	90016323	«Բլարգ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	7789.0	2159.0	5485.0		145.0
93.	90002836	«Էլեկտրոմոնտաժ» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	7778.8	640.0	6500.0		638.8
94.	90016177	«Հայաստանի բիզնեսի հիմնադրամ» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	7678.5	7348.5			330.0
95.	90212356	«Հայր և որդի Մուսայելյաններ» ՍՊԸ	ք.Մարտունի	7627.9	426.8	6916.4		284.7
96.	90024467	«ԱԻՍ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	7546.6	1601.5	5572.3		372.8
97.	90026334	«Մեծ - Անիվ» ՍՊԸ Ստեփանակերտի մասնաճյուղ	ք.Ստեփանակերտ	7534.6	331.0	4670.0	160.0	2373.6
98.	90016752	«Ճանշին» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	7285.5	4457.1	1478.6		1349.8
99.	90024243	«Սերկար» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	7280.4	2019.7	5007.4		253.3
100.	90341228	«Բարեկարգում» ՓԲԸ	ք.Շուշի	7168.9	1567.4	4930.0		671.5

ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՎԱԾ 778.3 ՄԼՆ ԴՐԱՄԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՎՆԱՍ՝ 64 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Հարկային մարմնի կողմից հրապարակվող տեղեկությունների շարքում ոչ պակաս հետաքրքրություն են առաջացնում նաև տարեկան կտրվածքով 1 մլն դրամ և ավելի հարկային վնասներ հայտարարագրած և ապառքներ կուտակած հարկ վճարողների ցանկերը: 2009 թվականի փաստացի շահութահարկի հաշվարկ

2008-ին 1 մլն դրամ և ավելի հարկային վնաս էր հայտարարագրել 76 հարկ վճարող՝ 990.8 մլն դրամ ընդհանուր գումարով կամ հարկային վնաս հայտարարագրած կազմակերպությունների թիվը և նրանց կողմից հայտարարագրված վնասի գումարը համապատասխանաբար նվազել է 12-ով և 212.5 մլն դրամով:

մեկ կազմակերպությանը՝ «Արցախագազ» ՓԲԸ-ին: Առանց նշված կազմակերպության վնասի միջին ցուցանիշը մեկ կազմակերպության հաշվով կազմել է շուրջ 8.3 մլն դրամ:



Հարկային վնասն առաջանում է, երբ տնտեսվարողի ծախսերը գերազանցում են նրա հասույթը

ներկայացրած 738 կազմակերպություններից 64-ը հայտարարագրել են 1 մլն դրամ և ավելի հարկային վնաս՝ 778.3 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ցանկերի վերլուծությունն ակնհայտ է դարձնում, որ 2009թ.-ին հայտարարագրված վնասի շուրջ 33%-ը կամ 255.9 մլն դրամը բաժին է ընկնում միայն

Հատկանշական է, որ 2009-ին վնասներ հայտարարագրած կազմակերպություններից 28-ը 2008-ին ևս հայտարարագրել է հարկային վնաս:

«ԱՆՅՈՒՄԱԼԻ» ԱՊԱՌՔՆԵՐ ԿՈՒՏԱԿԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՊԱՌՔԱՏԵՐԵՐ

1 մլն դրամ և ավելի ապառք կուտակած հարկ վճարողների ցանկը 2009թ.-ի արդյունքներով ունեցել է հետևյալ պատկերը. ցանկում ընդգրկված է 154 հարկատու, որոնց կողմից կուտակված ապառքի ընդհանուր գումարն այս տարվա հունվարի 1-ի դրությամբ կազմել է ավելի քան 1.7 մլրդ դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ապառքատեր հարկ վճարողները 132-ն էին, որոնց կուտա-

«անհուսալի» ապառքներ կուտակած կազմակերպությունները, որոնց մոտ բացակայում է գույքային ապահովագրությունը: Դրանց թվում են «Յուպի-տեր» ՓԲԸ-ն՝ 106.4 մլն դրամ, «Անկար» ՍՊԸ-ն՝ 30.4 մլն դրամ, «Մարտակերտի բեռնաօդանավակայանի» ՊԲԸ-ն՝ 14.1 մլն դրամ, «Ուկ-սի կրող» ՍՊԸ-ն՝ 11.1 մլն դրամ, «Նետպլյուս» ՍՊԸ-ն՝ 10.2 մլն դրամ ապառքի գումարով:

և դրամական միջոցների վրա արգելանք դնելն է. այս գործիքը հարկային մարմինը կիրառում է հարկ վճարողի կողմից չկատարված հարկային պարտավորության չափը 500 հազար դրամը գերազանցելու դեպքում:

Ապառքների հավաքագրման գործիքներից են նաև բռնագանձման հայցեր ներկայացնելը, պարտքի աստիճանական մարման ժամանակացույց սահմանելը, անվճարունակ ճանաչելու

Հարկային ապառքները օրենքով սահմանված վճարման ժամկետներում չվճարված հարկերն են

կաժ ապառքի ընդհանուր գումարը 2009-ի հունվարի 1-ի դրությամբ կազմել էր շուրջ 1.6 մլրդ դրամ:

Հարկ է նշել, որ կուտակված ապառքի ընդհանուր գումարի մեջ տեսակարար կշիռ ունեն, այսպես կոչված,

Հարկային մարմնի կողմից կիրառվող ապառքների հավաքագրմանն ու կրճատմանն ուղղված հիմնական գործիքը, որն առավել էֆեկտիվ է գործում, հատկապես ժամանակի խնայողության առումով, հարկատուի գույքի

հայցով դատարան դիմելը: Վերջինս այսօր չի կիրառվում, ինչը պայմանավորված է լիցենզավորված կառավարչի ինստիտուտի բացակայությամբ: ☐





2009 թվականի հաշվետու տարվա արդյունքներով 1վլն դրամ և ավելի հարկային վնասներ հայտարարագրած հարկ վճարողները

Գ/Գ	ՀՎՀՀ	Հարկ վճարողի անվանումը	Հարկ վճարողի գտնվելու վայրը	Վնասի մեծությունը (հազ. դրամ)
1.	90010189	«Արցախգազ» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	255897.4
2.	90008901	ԼՂՀ «Հանրային հեռուստառադիոընկերություն» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	63610.2
3.	90072337	«Բիլդինգ Փրոդակշն» ՓԲԸ	գ. Բերքածոր	55306.7
4.	90017411	«Կարին» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	49915.3
5.	90281869	«Միկա Հադրուք» ՓԲԸ	ք. Հադրուք	35566.9
6.	90073468	«Նահա» ՍՊԸ	գ. Իվանյան	25282.6
7.	90023094	ԼՂՀ «Գյուղի եւ գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ»	ք.Ստեփանակերտ	23082.3
8.	90211894	ԼՂՀ ԱՆ «Մարտունու շրջանային բուժփավորում» ՓԲԸ	ք. Մարտունի	19773.8
9.	90010207	«ԶԻ ԷՖ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	18038.0
10.	90211388	«Մարտունու Կոմունալ տնտեսություն» ՓԲԸ	ք. Մարտունի	16242.2
11.	90010282	«Արցախ Կաթ» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	15938.5
12.	90143773	«Մարտակերտի գյուղատնտեսական ծառայություններ» ՓԲԸ	ք. Մարտակերտ	13326.7
13.	90072731	«Վարանդա» ՓԲԸ	ք.Ասկերան	12151.0
14.	90026249	ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության «Տոհմային կայան» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	10172.4
15.	90002698	«Արցախկապ» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	8101.1
16.	90140122	Մարտակերտի «Կոմունալ բնակարանային» ՓԲԸ	ք. Մարտակերտ	7651.9
17.	90025262	«Արցախ Ֆրուք» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	7312.0
18.	90024949	«Միջազգային բիզնես կենտրոն» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	6888.3
19.	90016933	Ամերիկայի «Արմենիան թեքնոլոջի գրուպ»	գ.Խրամորթ	6671.9
20.	90025049	«Էռմի» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	5997.3
21.	90022496	«Հիսունհինգ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	5561.4
22.	90005259	«Մասնագիտացված մոնտաժային շահագործման տեղամաս» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	5498.9
23.	90013685	«Մաքս-վուդ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	5277.4
24.	90341622	«Ստելլեր» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	5249.3
25.	90020836	«Կոբրա» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	5138.3
26.	90073561	«Ժայռ» ՍՊԸ	գ. Այգեստան	4921.0
27.	90213676	«Ճարտարի ջրամատակարարման ցանց» ՓԲԸ	գ. Ճարտար	4579.3
28.	90019982	«Ավան» ՓԲԸ	ք. Շուշի	4516.0
29.	90015579	ԼՂՀ ԱՆ «Ինֆեկցիոն հիվանդանոց» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	4457.0
30.	90000239	«Մետաքս» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	4270.0
31.	90021493	«Ռուս-հայկական գործարար համագործ. ասոցացիա»	ք.Ստեփանակերտ	4128.4
32.	90026859	«Արցախի պետական նախագծային կենտրոն» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	3944.4
33.	90022101	«Մարլի» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	3802.7
34.	90008952	ԼՂՀ ԱՆ «Հակապալարախտային դիսպանսեր» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	3749.5
35.	90016691	«Պրոմստրոյ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	3726.0
36.	90027518	«Իզոտոպ դելտա» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	3655.0
37.	90342263	«Գոլդ բոնդ» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	3453.0
38.	90006741	«Ավետիս» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	3404.0
39.	90026092	«Բազալտ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	2950.1
40.	90142299	«Ազրոսպասարկում» ՓԲԸ	գ. Չլդրան	2763.2
41.	90009526	«Ստեփանակերտի կոնդենսատորների գործարան» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	2712.0
42.	90020354	«Ռոյալ Գրուպ» ՍՊԸ	ք. Շուշի	2557.7
43.	90008771	ԼՂՀ ԱՆ «Հանրապետական հիվանդանոց» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	2291.6
44.	90001077	«Լոտոս» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	2156.9
45.	90022581	«Սելլետ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	1869.7
46.	90011285	«Ադրյուր» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	1819.4
47.	90024294	«Հռութ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	1711.0
48.	90026694	«Չտո դելտա» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	1496.3
49.	90021381	«Մեթրիս ալթի սոլուշն» ՍՊԸ	ք.Բերձոր	1491.5
50.	90023464	«Գնդապետ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	1484.0

2009 թվականի հաշվետու տարվա արդյունքներով 1մլն դրամ և ավելի ապառք կուտակած հարկ վճարողները

Դ/Դ	ՀՎՀՀ	Հարկ վճարողի անվանումը	Հարկ վճարողի գտնվելու վայրը	Ապառքի գումարը (հազ. դրամ)
1.	90073348	«Դվին-2004» ՍՊԸ	գ. Իվանյան	156582.7
2.	90022272	«Ստեփանակերտի կոնյակի գործարան» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	127580.6
3.	90073183	«Անի-2003» ՍՊԸ	գ. Իվանյան	110443.6
4.	90005216	«Յուպիտեր» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	106361.9
5.	90003442	«Կապավոր» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	98848.8
6.	90073279	«Ավվադոր» ՓԲԸ	գ. Այգեստան	87081.7
7.	10002205	«Աղահեջ» ՍՊԸ	ք. Բերձոր	62941.3
8.	90004565	«Արցախանտառ» ՊՈԱԿ	ք. Ստեփանակերտ	41832.5
9.	90023576	«Ֆոր դիրեկշն» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	41487.0
10.	90010189	«Արցախագա» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	40941.3
11.	90020527	«Էվվարա» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	39049.9
12.	10002376	«Առան» ՍՊԸ	ք. Բերձոր	34689.8
13.	90016169	«Բեյզ Մեթլզ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	33441.5
14.	90025813	«Տեխնոշին» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	33362.0
15.	90021469	«Այգաբաց» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	31158.5
16.	90024286	«Անկար» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	30374.4
17.	10000698	«Ատոմ» ՍՊԸ	ք. Բերձոր	26842.2
18.	90070057	«Արցախ բրենդի կոմպանի» ՓԲԸ	ք. Ասկերան	22837.7
19.	90020354	«Ռոյալ Գրուպ» ՍՊԸ	ք. Շուշի	22171.9
20.	90072886	«Ենգիբարյան» ՓԲԸ	գ. Բերգաձոր	21858.5
21.	90019425	«Անարան Գոլդ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	20575.6
22.	90013565	«Աշոց» ՍՊԸ	ք. Ասկերան	20305.5
23.	90012812	«Ստեփանակերտ Սերվիս» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	17459.3
24.	6300867	«Սեպասար» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	14819.0
25.	90142091	«ԲՈՒԱՏ» ՊՓԲԸ	ք. Մարտակերտ	14079.7
26.	90026686	«Գաղտնիք» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	13612.9
27.	90004514	«Միդիս» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	13171.4
28.	90024371	«Սազա-գազ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	11315.1
29.	90015587	«Ուկսի կրող» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	11129.1
30.	10003027	«Տաշիր» ՍՊԸ	ք. Բերձոր	11035.0
31.	90017507	«Նետ +» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	10245.1
32.	90016968	«Ստեփանակ. մարգատեխնիկական ակումբ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	10142.0
33.	90013376	Կույր. միավ. ուսումնա-արտադր. ձեռն.	ք. Ստեփանակերտ	9856.5
34.	90022368	«Առաքելյան Գեվորգ» ՍՊԸ	գ. Չուար	9778.9
35.	90002698	«Արցախկապ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	9288.9
36.	90004496	«Մարգարիտա» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	9067.5
37.	90418825	Միրզոյան Արզամ ա/ձ	ք. Ստեփանակերտ	8906.8
38.	90003365	«Շինանյութ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	8324.8
39.	90017643	«Ն. Դ. Ս.» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	8264.1
40.	90017635	«Ստեփորան» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	8212.7
41.	90212588	«Լուսակերտ» ՍՊԸ	ք. Մարտունի	8101.5
42.	90022874	«Բիզնես Գրուպ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	7871.4
43.	90280919	Հաղորդի «Կոմ. տնտեսություն» ՓԲԸ	ք. Հաղորդ	7607.2
44.	90002181	«Ազրո» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	7606.7
45.	90020913	«Կենցաղի տուն» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	7341.6
46.	90005027	«Ջրմուղ կոյուղի» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	7019.9
47.	90025968	«Կառուցապատման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ	ք. Ստեփանակերտ	6798.7
48.	90071507	«Ֆելիքս-71» ՍՊԸ	գ. Լորագյուղ	6406.4
49.	90009526	«Ստեփանակերտի կոնդենսատորների գործարան» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	6383.2
50.	90014208	«Տիտան» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	6310.5



2009 թվականի հաշվետու տարվա արդյունքներով 1 մլն դրամ և ավելի ապառք կուտակած հարկ վճարողները

Հ/Հ	ՀՎՀՀ	Հարկ վճարողի անվանումը	Հարկ վճարողի գտնվելու վայրը	Ապառքի գումարը (հազ. դրամ)
51.	90010884	«Էլիտա 1» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	6216.3
52.	90013187	«Ճանշինվերանորոգում» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	6186.8
53.	10001975	«Արտաշես-Արգիշտի» ՍՊԸ	ք. Բերձոր	6122.2
54.	90012719	«Ալրադաց» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	5978.0
55.	90015123	Ավ. Թախթաշյանի անվ. «Բուսաբանական այգի» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	5890.9
56.	90015981	«Ստեփանակերտի հացի գործարան» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	5649.1
57.	90016358	«Դելտա» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	5328.4
58.	90020604	«Բջջային աշխարհ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	5126.2
59.	90072388	«ԲՈՒՄՏ» ՊԲԸ	ք. Ասկերան	5032.3
60.	90140122	«Մարտակերտի «Կոմունալ բնակարանային» ՓԲԸ	ք. Մարտակերտ	4932.4
61.	90024776	«Դիզա» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	4698.5
62.	09801241	«Սամ» ԱԿ	ք. Սիսիան	4566.6
63.	90070081	«Ղլիժբաղ» ԱԿ	ք. Ասկերան	4553.4
64.	90003048	«Անի» ԱԿ	ք. Ստեփանակերտ	4504.4
65.	90020639	«Կապիտալ շինարարություն» ՊՈԱԿ	ք. Ստեփանակերտ	4399.1
66.	90070451	«Հարար» ՍՊԸ	գ. Հարավ	4022.9
67.	90073098	«Սֆինկս» ՓԲԸ	ք. Ասկերան	3987.8
68.	90024536	«Հակոբյան» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	3913.2
69.	90012322	«Բնակարանային շահագործման տնտեսություն» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	3797.5
70.	90001652	«Միդաս» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	3795.7
71.	90020828	«Արմի» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	3736.1
72.	90014781	«Թ-77» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	3730.7
73.	90002836	«Էլեկտրոմոնտաժ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	3698.0
74.	90070701	«Վրեժ» ՓԲԸ	ք. Ասկերան	3677.3
75.	90021623	«Ասա ալկո» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	3528.7
76.	90012125	«Սեզամ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	3502.4
77.	90022067	«Ֆորվարդ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	3265.0
78.	90002767	«Սյունիք» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	3216.8
79.	90022496	«Հիսունհինգ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	3207.2
80.	90018121	«Նետո» ԱԿ	ք. Ստեփանակերտ	3154.3
81.	90020879	«Փերֆեքթ Սետթինգ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	2958.2
82.	90014645	«Արցախշին» ԴՁ	ք. Ստեփանակերտ	2931.7
83.	90020407	«Մայքրոքաթ Դայմոնդս» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	2891.5
84.	90002088	«Գոռ» ՍՊԸ	ք. Զարվաճառ	2819.9
85.	90017558	«Բելկար» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	2809.8
86.	90281421	Բեռնաուդ. տրանս. ձեռ. /ԲՈՒՄՏ/	ք. Հաղրութ	2796.8
87.	90016624	«Կորեկ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	2793.3
88.	90070512	«Փյունիկ» ՍՊԸ	Հայկազուկի տեղամաս	2773.2
89.	90021727	«Պեպիտո» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	2690.7
90.	90026739	«Հաջողակ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	2681.2
91.	90024304	«Վահրամ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	2677.5
92.	90023019	«Վան Էրգրում» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	2638.8
93.	90016504	«Միկաս» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	2528.9
94.	90073588	«Դորկապ» ՓԲԸ	ք. Ասկերան	2465.0
95.	90003967	«Ապա» ԱՁ	ք. Ստեփանակերտ	2458.2
96.	90001274	«Կամսարական» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	2405.9
97.	90016752	«Ճանշին» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	2402.5
98.	90143043	«Էրա» ՍՊԸ	ք. Մարտակերտ	2326.2
99.	90014773	«Սիրկապ Արմենիա» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	2267.6
100.	90023421	«Լայթինգայրո» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	2250.5

ՄԻՆՉԵՎ 2012Թ.-Ը ԱՐՅԱԽՆ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱ ՆԵՐԿՐՈՂՈՒՅ ԿՂԱՌՆԱ ԱՐՏԱՅԱՆՈՂ ԵՐԿԻՐ

*«Առաջիկայում ունենալու ենք միջազգային
չափանիշներին համապատասխանող
Էներգետիկ համակարգ»*

*Հայտարարում է Արտադրական
ենթակառուցվածքների վարչության պետ
Կառլեն Պետրոսյանը*





- Պարոն Պետրոսյան, ինչպես արձանագրված ցուցանիշներն են վկայում, այսօր Էներգետիկայի բնագավառն առաջատար ոլորտներից է: Վերջին տարիներին ի՞նչ ներդրումներ են կատարվել այս ոլորտում և ռազմավարական ի՞նչ ծրագրեր կան:

- Էներգետիկան երկրի անկախության, անվտանգության և տնտեսության կայուն զարգացման գործում ռազմավարական նշանակություն ունի: Այս համակարգը տնտեսության զարգացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքի հիմնական մասերից մեկն է: Գիտեք, որ եթե պետությունն Էներգիայի որևէ աղբյուրով անկախ է այլ պետություններից, ապա հնարավոր է տնտեսության կայուն զարգացում ապահովել: Յենց այս նկատառումներից ելնելով՝ բնագավառում իրականացվող քաղաքականության հիմնահարցերից մեկն է հանդիսանում ժամանակակից Էներգետիկ սարքավորումների կիրառմամբ ցածր գնեցող հուսալի Էներգամատակարարման ապահովումը՝ բոլոր սպառողների կարիքները բավարարելու համար: միևնույն ժամանակ այն խթանում է երկրում Էներգախնայողությունը: Այսօր ժամանակի հրատապ պահանջ են դարձել արտադրող հզորությունների, Էլեկտրաէներգիայի տեղափոխող, բաշխող ցանցերի սերնդափոխության և արդիականացման հետ կապված հարցերը, որոնց իրականացման համար անհրաժեշտ է ներգրավել ինչպես պետական բյուջեի, այնպես էլ՝ սեփական և փոխառու միջոցներ:

Էներգետիկայի բնագավառում ռազմավարական խնդիրներին զուգընթաց լուծվում են նաև սոցիալական և գյուղատնտեսության

ոլորտների էական խնդիրներ, ինչպիսիք են՝ նոր աշխատատեղերի ստեղծումը և գյուղատնտեսական նշանակության հողերի ոռոգումը:

Ասեմ, որ մեր հանրապետության ղեկավարության ուշադրության կենտրոնում է գտնվում ոչ միայն Էներգետիկայի բնագավառը, այլ նաև՝ այդ համակարգում աշխատող մարդկանց կենցաղային պայմաններն ու բարոյափոփոխական վիճակը:

Այս աշխատանքների ծավալը տասնյակ միլիարդների է հասնում: Աշխատանքներն ավարտելուց հետո սպառողները կապահովվեն հուսալի Էլեկտրաէներգիայով՝ մատչելի սակագներով:

2008 թվականից առ այսօր այդ ոլորտում խոշոր ներդրումներ են կատարվում:

Արցախի համար Էլեկտրաէներգիայի արտադրության հուսալի աղբյուր են հանդիսանում ջրային ռեսուրսները:

Համակարգը կազմված է երկու հիմնական մասերից՝ Էլեկտրաէներգիայի արտադրություն և արտադրված Էլեկտրաէներգիայի տեղափոխում ու բաշխում:

Արտադրության բնագավառում շահագործման է հանձնվել «Թրդե-1» հիդրոէլեկտրակայանը, իրականացվում են «Թրդե-2», «Մատաղիս-1» և «Մատաղիս-2» ՀԷԿ-երի շինարարական աշխատանքները, իսկ «Թրդե-3» ՀԷԿ-ի նախագծանախահաշվային փաստաթղթերը մշակման փուլում են: Թրդե գետի հունի տեղափոխումը Սարսանգի ջրամբար

հնարավորություն է ընձեռում լրացուցիչ Էլեկտրաէներգիա ստանալ «Սարսանգ» ՀԷԿ-ում:

Պլանավորվում է կատարել Սարսանգ ՀԷԿ-ի դերիվացիոն թունելի կապիտալ նորոգման աշխատանքները և ամբարտակի ֆիլտրացիոն ջրատարի ափերի և հունի մաքրումը: 2010 թվականին կկատարվեն նաև Սարսանգի պատվարի ամրության ուսումնասիրություններ:

Այս աշխատանքների ծավալը տասնյակ միլիարդների է հասնում: Աշխատանքներն ավարտելուց հետո սպառողները կապահովվեն հուսալի Էլեկտրաէներգիայով՝ մատչելի սակագներով:

Միայն 2009 թվականին Սարսանգի ՀԷԿ-ն արտադրել է 119 մլն 224 հազ. կվտ/ժամ Էլեկտրաէներգիա, ինչը պլանավորվածից ավել է 19.2 մլն կվտ/ժամ-ով. ծրագրված արտադրանքը 16.1 տոկոսով գերակատարվել է:

2009 թվականին ջրի տեսակարար ծավալը կազմել է 4.4 լիտր 1 կվտ/ժամ Էլեկտրաէներգիա արտադրելու համար, 2008 թվականին այդ ցուցանիշը կազմել է 5.4 լիտր, այսինքն՝ ջրի մակարդակը 2009թ.-ին առավել օպտիմալ է օգտագործվել:

Նշված աշխատանքներն իրականացվում են «Արցախ ՀԷԿ»-ի կողմից, որի բաժնետոմսերի զգալի մասը պետական է:

Էլեկտրաէներգիայի տեղափոխումը և բաշխումն իրականացվում է «Արցախէներգո»-ի միջոցով, որի բաժնետոմսերի 100 տոկոսը պատկանում է պետությանը:

Արդեն ավարտման փուլում է Շուշիի 110 ԿՎ 35/10 ենթակայանի կառուցումը:



Այն շահագործման կհանձնվի հաջորդ տարվա առաջին կիսամյակում: Նմանատիպ ենթակայան կկառուցվի նաև Ստեփանակերտում, որը հնարավորություն կտա բարձրացնել մայրաքաղաքի, Ասկերանի, Մարտակերտի, Շահումյանի շրջանների բնակավայրերի էներգամատակարարման որակը: Իսկ Շուշիի ենթակայանը կնպաստի Շուշիի, Մարտունու և Զադրուքի շրջանների էներգամատակարարման հուսալիության բարձրացմանը: Նման ծրագրերը, ինչ խոսք, թանկ հաճույք են (մեկ ենթակայանի արժեքը 400-500 մլն դրամ է): Այս ծրագիրը ֆինանսավորվում է ԱՊԵԿ-ի, ԵԴԻ, և՛ փոխառու միջոցներով, ինչպես նաև «ԱրցախԷներգո» ՓԲԸ-ի սեփական միջոցների հաշվին: Առանձին ծրագրերով առաջնահերթության կարգով ամեն տարի հիմնովին և մասնակի վերանորոգվում են տասնյակ կիլոմետրերի հասնող 10/0.4 ԿՎ օդային գծեր, վերանորոգվել են մի շարք տրանսֆորմատորային ենթակայաններ, կառուցվել են 5-6 նմանատիպ ենթակայաններ, էլեկտրաֆիկացվում են վերաբնակեցվող բնակավայրերը: Միայն Զադրուքի շրջանում իրականացվել են 16 մլն դրամի չափով էլեկտրաֆիկացման աշխատանքներ, Քաշաթաղի շրջանում՝ հյուսիսային թևում, երկու տարվա ընթացքում 143 մլն դրամի շինարարական աշխատանքներ են կատարվել:

Ձեռք են բերվել 20 միավոր նորագույն մասնագիտացված մեքենաներ՝ շուրջ 600 մլն դրամ ընդհանուր արժողությամբ: Այս ամենի արդյունքում տեխնի-

կական կորուստները զգալիորեն նվազել են, պակասել են նաև վթարների պատճառով էլեկտրաէներգիայի անջատումները:

Մասնաճյուղերում տեղադրվել են 6000 էլեկտրոնային հաշվիչներ, որոնց տեղադրման աշխատանքները շարունակվում են:

Ուզում եմ նշել, որ նման մասնագիտացված աշխատանքների կատարումն ու ժամանակակից սարքավորումների ներդրումը ԼՂՀ-ում իրականացվում է առաջին անգամ:

Էլեկտրաֆիկացվում են վերաբնակեցվող բնակավայրերը: Միայն Զադրուքի շրջանում իրականացվել են 16 մլն դրամի չափով էլեկտրաֆիկացման աշխատանքներ, Քաշաթաղի շրջանում՝ հյուսիսային թևում, երկու տարվա ընթացքում 143 մլն դրամի շինարարական աշխատանքներ են կատարվել:

- Ընդհանրապես, փոքր հիդրոէներգետիկայի բնագավառի զարգացումը կարևոր է, քանի որ փոքր ՀԷԿ-երի արտադրած էներգիան ավելի էժան է: ԼՂՀ տարածքը որքանո՞վ է գրավիչ նման ՀԷԿ-երի կառուցման և գործարկման համար:

- Միանշանակ կարող եմ ասել, որ ԼՂՀ տարածքում փոքր ՀԷԿ-երի կառուցման գործընթացը՝ կախված գետերի ռելիեֆից, գրավիչ է: Փոքր ՀԷԿ-երի

զարգացման համար Էական է նաև հարկային բարենպաստ դաշտը: Այսօր առանց պետական մասնակցության Աղավնո գետի վրա կառուցվում է «Սյունիքի-1» ՀԷԿ-ը: Նախատեսվում է նաև «Կարկառ-1», «Կարկառ-2», «Իշխանազետ-1» և «Իշխանազետ-2» փոքր ՀԷԿ-երի կառուցումը: Ուսումնասիրելով այլ երկրներում փոքր ՀԷԿ-երի միջոցով էլեկտրաէներգիա արտադրելու հնարավորությունները՝ կարող եմ վստահորեն ասել, որ դարաբաղյան շուկան այս առումով շատ ավելի լուրջ հնարավորություններ է տալիս, քան զարգացած շատ երկրներում: Դրսում էնեգիա արտադրողն ինքը պետք է գտնի սպառողին, իսկ Ղարաբաղում գնման երաշխիքները հստակ են:

- Իսկ որքանո՞վ է այսօր Էներգահամակարգը բավարարում ներքին պահանջարկը և հետագայում հնարավոր կլինի՞ սեփական ռեսուրսներով ապահովել էլեկտրաէներգիայի մատակարարումը ԼՂՀ ամբողջ տարածքում:

- Ինչպես գիտեք, Արցախն այժմ էլեկտրաէներգիա է գնում նաև Զայաստանից: Սակայն նման տեմպերի պայմաններում, երբ մեր ներուժը լիարժեք օգտագործենք, հուսով եմ, առաջիկայում կունենանք միջազգային չափանիշներին համապատասխան էլեկտրաէներգիա արտադրող, տեղափոխող և բաշխիչ համակարգ, և մինչև 2012 թվականը մեր հանրապետությունն էլեկտրաէներգիա ներկրողից կդառնա էլեկտրաէներգիա արտահանող երկիր: 

ՀԻՇԵՔ ՀԱՐԿԱՅԻՆԸ

ՀԱՏԿԱՊԵՍ

ԱՅՍ ՕՐԵՐԻՆ

Նոյեմբեր

I	II	III	IV	V	VI	VII
1	2	3	4	5	6	7
8	9	10	11	12	13	14
15	16	17	18	19	20	21
22	23	24	25	26	27	28
29	30					

բոլոր մանրամասներն այստեղ՝

www.tax.nk.am

ԱՐՑԱԽՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԲՈՒՄԸ.

5 ՀԷԿ-երի շահագործմամբ կբավարարվի տեղական պահանջարկի 85 տոկոսը

*«Բիզնեսի առաջին օգնականը մեր պետությունն է,
իշխանությունների կողմից վարվող
տնտեսական քաղաքականությունը»*

*Դրական արդյունքներ արձանագրած
«Արցախի ՀԷԿ»-ի գլխավոր տնօրեն
Վահրամ Բեգլարյանի համոզմունքն է*



- Պարոն Բեգլարյան, շուրջ երկու տարի է, ինչ գործում է Ձեր ղեկավարած կառույցը՝ «Արցախ ՅԷԿ»-ը: Այս ժամանակահատվածում ի՞նչ ներդրումներ են կատարվել:

- «Արցախ ՅԷԿ»-ի հիմնադրման նպատակը ԼՂՀ ամենախոշոր՝ Թրդի գետից Թարթառ գետը թափվող ջրատարի վրա համապատասխանաբար երկու և երեք հիդրոէլեկտրակայանների կառուցումն ու հետագա շահագործումն է: Ընդ որում, յուրաքանչյուր ՅԷԿ-ի շինարարության ժամկետ է սահմանվել 2 տարի: Այսօր արդեն ավարտին են հասցվել «Թրդի 1» ՅԷԿ-ի կառուցման շինմոնտաժային աշխատանքները:

Ներկայումս շահագործվում են «Սարսանգ» և «Թրդի 1» ՅԷԿ-երը: Սարսանգի ՅԷԿ-ը 2009թ.-ին արտադրել է 119.2մլն կվտ/ժամ էլեկտրաէներգիա, որը ծրագրված արտադրանքը գերազանցում է 16.1 տոկոսով: Բավականին խոսուն են նաև ջրի մակարդակի օգտագործման ցուցանիշները. 2009-ին Սարսանգի ՅԷԿ-ի ջրի տեսակարար ծավալը կազմել է 4.4 լիտր՝ 1 Կվտ/ժամ էլեկտրաէներգիա արտադրելու դիմաց: Իսկ «Թրդի 1» ՅԷԿ-ի միջոցով նախատեսվում է տարեկան արտադրել մինչև 16մլն Կվտ/ժամ էլեկտրաէներգիա: Վերջինիս հզորությունը կազմում է 3 ՄՎտ: Կայանը հագեցած է նորագույն սարքավորումներով:

Ընկերությունը, ներգրավվելով փոխառու միջոցներ, իրականացնում է շինարարական մոնտաժային աշխատանքներ Մատաղիս 1, Մատաղիս 2, Թրդի 2, Թրդի 3 ՅԷԿ-երի կառուցման ուղղությամբ: Այս տարվա հուլիսի 1-ի դրությամբ կատարված ներդրումները համապատասխանաբար կազմել են 2մլրդ 482մլն, 1մլրդ 276մլն, 848մլն, 1.6մլն դրամ (ներառյալ ԱԱՀ):

Թրդի 1, Թրդի 2, Թրդի 3, Մատաղիս 1, Մատաղիս 2 ՅԷԿ-երի կառուցման

ծրագրի նախնական արժեքը կազմում է 8.8մլրդ դրամ, որից 2008թ.-ից մինչև այս տարվա օգոստոս ամիսը կատարված աշխատանքների ծավալը կազմել է ավելի քան 4.6մլրդ դրամ, որից 3.3մլրդ դրամի աշխատանքն իրականացվել է վարկային միջոցներով, 862մլն դրամը՝ թողարկված բաժնետոմսերից հավաքագրված գումարներով և 446մլն դրամը իրականացվել է սեփական միջոցներով:

- Չնայած Արցախ ՅԷԿ-ը նորաստեղծ կազմակերպություն է, բայց արդեն հասցրել է շահույթ ապահովել: Ինչի՞ շնորհիվ է հաջողվել դրական արդյունք արձանագրել:

Հինգ հիդրոէլեկտրակայանների լիարժեք շահագործումը հնարավորություն կտա բավարարել տեղական պահանջարկի ավելի քան 80-85 տոկոսը:

- Արցախ ՅԷԿ-ը 2009թ.-ի գործունեության արդյունքում ապահովել է շուրջ 670մլն դրամ շահույթ:

Կարծում եմ՝ նմանատիպ արդյունքներ կարողացել ենք արձանագրել մի շարք գործոնների և խրախուսող հանգամանքների շնորհիվ: Առաջին հերթին էներգետիկ ոլորտն իշխանությունների կողմից պաշտոնապես հայտարարված է որպես զարգացման առաջնահերթություն, և վարվող տնտեսական քաղաքականությունը դրական է անդրադառնում ոլորտի վրա:

«Արցախ ՅԷԿ» ընկերությունը վաճառում է արտադրված էլեկտրաէներգիան՝ տարեկան պայմանագրի համաձայն, որտեղ ֆիքսվում է տվյալ տարում վաճառվող էլեկտրաէներգիայի ծավալը և սակագինը: Այսպիսով, արտադրված ողջ էլեկտրաէներգիան միանգամից վաճառվում է, հետևա-



բար մարքեթինգի և վաճառքի հետ կապված որևէ խնդիր չի առաջանում: Դրական ազդեցություն է ունեցել նաև ջրի մակարդակի ավելի օպտիմալ օգտագործումը:

Նշեմ նաև, որ ընկերության գործունեության բնականոն ընթացքի վրա ֆինանսատնտեսական ճգնաժամը որևէ կերպ չի ազդել, քանի որ հիդրոէլեկտրաէներգիայի արտադրությունն այն եզակի բիզնես ոլորտներից է, որոնց վրա լոկալ և գլոբալ ճգնաժամերը ոչ մի ազդեցություն չեն ունենում:

գործունեության քաղաքական, վիճելի տարածքների ռիսկեր, որոնք էական ազդեցություն են ունենում ընկերության գործունեության վրա, այնուամենայնիվ ընկերության կողմից թողարկված բաժնետոմսեր են ձեռք բերել ինչպես խոշոր, այնպես էլ փոքր ներդրողներ: Այսպես, 2009 թվականին տեղի ունեցած Արցախի ՀԷԿ-ի բաժնետոմսերի բաց բաժանորդագրության արդյունքում բաժանորդագրվել է 1.111 բաժնետեր, տեղաբաշխվել 862.074 բաժնետոմս՝ 1000 դրամ անվանական արժեքով: Կարևոր ձեռքբերում է նաև պետության և գոր-

լիարժեք շահագործումը հնարավորություն կտա բավարարել տեղական պահանջարկի ավելի քան 80-85 տոկոսը:

- Այս տարվա համար գերակա ի՞նչ ուղղություններ է նախանշել Ձեր ընկերությունը: Չարգացման ի՞նչ ծրագրերի մասին կարող ենք այսօր արդեն խոսել:

- Ընկերությունը նախատեսում է իրականացնել լայնածավալ ներդրումներ փոքր ՀԷԿ-երի՝ Մատաղիս 1, Մատաղիս 2, Թրդի 2, Թրդի 3 հիդրոէլեկտրակայանի կառուցման ուղղությամբ: Դրանց շահագործումը ռազմավարական նշանակություն ունի ԼՂՀ-ի համար:

2011թ.-ի առաջին եռամսյակում շահագործման կհանձնվեն «Թրդի 2», իսկ մինչև տարեվերջ՝ «Մատաղիս 1» և «Մատաղիս 2» կայանները:

Արցախի ՀԷԿ-ում այս տարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ ունենք 95 աշխատատեղ: Այստեղ միջին ամսական աշխատավարձը 95 հազար դրամ է: Մինչև 2011թ.-ի վերջը նախատեսում ենք ևս 70-80 նոր աշխատատեղ բացել:

Տեղին է նշել, որ գործունեության ընդլայնման նպատակով «Արցախի ՀԷԿ»-ը՝ որպես Լեռնային Ղարաբաղում հիմնական հիդրոէներգետիկ հզորությունների սեփականատեր և նոր ՀԷԿ-եր կառուցող ընկերություն, որն իրականացրել է բաժնետոմսերի առաջին հրապարակային տեղաբաշխումը (IPO) Հայաստանում, նախատեսել է բաժնետոմսերի տեղաբաշխման եղանակով նոր ֆինանսական միջոցներ ներգրավել. օգոստոսի 20-ին ընկերության տնօրենների խորհուրդը 1.4մլրդ դրամ ծավալի 1.4մլն հատ ոչ փաստաթղթային սովորական անվանական բաժնետոմսեր լրացուցիչ տեղաբաշխելու մասին որոշում է ընդունել: Նախատեսում ենք նաև գործուն քայլեր ձեռնարկել՝ նորագույն սարքավորումներ ձեռք բերելու և տեխնիկական վերազինման ուղղությամբ: 



Ընկերության գործունեության բնականոն ընթացքի վրա ֆինանսատնտեսական ճգնաժամը որևէ կերպ չի ազդել, քանի որ հիդրոէլեկտրաէներգիայի արտադրությունն այն եզակի բիզնես ոլորտներից է, որոնց վրա լոկալ և գլոբալ ճգնաժամերը ոչ մի ազդեցություն չեն ունենում:

- Նշեցիք, որ դրական արդյունք ապահովելու գլխավոր նախապայմանը երկրում վարվող տնտեսական քաղաքականությունն է: Իսկ, ընդհանուր առմամբ, ձեր բիզնեսի վրա այն ինչպե՞ս է անդրադառնում:

- ԼՂՀ-ում ներդրումային միջավայրը և գործող հարկային դաշտը բավականին գրավիչ են: Այս հարցում, իհարկե, մեծ է հատկապես պետության, Արցախի իշխանությունների կողմից վարվող հետևողական քաղաքականությունը՝ ներդրողներ ներգրավելու առումով: Չնայած համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի, ինչպես նաև մի շարք այլ ռիսկային

ծարարների միջև ստեղծված գործընկերային հարաբերությունները:

- Պրն Բեգլարյան, նկատի ունենալով Ձեր գործունեության տպավորիչ ծավալները, կարո՞ղ ենք փաստել, որ հետագայում հնարավոր կլինի սեփական ռեսուրսներով ապահովել ամբողջ ԼՂՀ տարածքում էլեկտրաէներգիայի մատակարարումը:

- 2007 թվականին էլեկտրաէներգիայի նկատմամբ տեղական պահանջարկը կազմել է 225մլն ԿՎտ/ժամ, որի միայն 40 տոկոսն է բավարարվել ԼՂՀ-ում արտադրված էլեկտրաէներգիայի հաշվին: Հինգ հիդրոէլեկտրակայանների

**բոլոր հարցերն
ունեն իրենց
պատասխանները՝**

www.tax.nk.am

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀՍԿԱՆԵՐԸ՝ ԱՐՑԱԽՅԱՆ ԲՐԵՆԴԻ ՍՏՎԵՐՈՒՄ



Արցախի «թոթի օղու» արժեքը գիտեն շատ երկրներում. արցախյան հրաշքը, որը նվաճել էր նույնիսկ Ալեքսանդր Մակեդոնացուսիրտը, մեծ պահանջարկ է վայելում Ռուսաստանում, Ուկրաինայում, Եվրոպական շատ պետություններում, ԱՄՆ-ում: Հետաքրքրությունը մեր ազնվական

խմիչքի նկատմամբ տարեցտարի մեծանում է, սպառման շուկաներն էլ՝ ընդլայնվում: Արցախյան հպարտությունը մեծ թափով նոր բարձունքներ է նվաճում, գրավում նոր շուկաներ՝ ոչ միայն հայտնվելով համաշխարհային հսկաների կողքին, այլև նաև ստվերում թողնելով մյուսներին:

Որտեղ նորամուծություններ հնեցման թեմայով, այնտեղ՝ Գեորգի Օհանյանի անունը. հենց նրա անվան և հմուտ քաղաքականության հետ է կապվում տակառներում թթի օղու հնեցման ավանդույթը: Դրան հաջորդել են կաղնու տակառում հնեցման մի շարք փորձեր, արդյունքում նախապատվությունը տրվել է հենց թթի տակառին, որը հնեցման համար ավելի գերադասելի է: Նոր մոտեցումներ, նորագույն տեխնոլոգիաներ, հմուտ քաղաքականություն. այդ ամենի արդյունքը չուշացավ, և նրբաճաշակ սպառողները սկսեցին փնտրել հենց Գեորգի Օհանյանի ղեկավարած ընկերության էլիտար արտադրանքը, որը միանգամից առաջ անցավ համաշխարհային մրցակիցներից՝ դառնալով ամենամեծ պահանջարկ վայելող բրենդը:



«Լուրջ հիմքեր ունեմ վստահորեն հայտարարելու, որ այս ոլորտն Արցախում զարգացման մեծ հեռանկար ունի»

*Հարցազրույց «Արցախ բրենդի կոմպանի» ՓԲԸ
հիմնադիր Գեորգի Օհանյանի հետ*



«Արցախ բրենդի կոմպանի»-ն արդեն նվաճել է Ռուսաստանի, Ուկրաինայի, ԱՄՆ-ի, Իտալիայի, Չեխիայի և Էստոնիայի շուկաները: Համագործակցության շրջանակներն այդպիսով չեն սահմանափակվում, ավելին՝ տարեցտարի ընդլայնվում են: Շուտով մեր մրգային օղիները կհայտնվեն նաև Ֆրանսիայում, Բելգիայում, Կանադայում:

- Պարոն Օհանյան, Ձեր ղեկավարած «Արցախ բրենդի կոմպանի» ընկերությունն այսօր առաջատար դիրքեր է զբաղեցնում Արցախի և Հայաստանի շուկաներում:

Ի՞նչ ուղի է անցել ընկերությունը: Ինչպե՞ս սկիզբ դրվեց «Արցախ Բրենդի Կոմպանի» ընկերության բիզնեսին Ղարաբաղում:

- «ԱՐՑԱԽ ԲՐԵՆԴԻ ԿՈՄՊԱՆԻ»-ի տարածքում նախկինում գինու գործարան էր, որը գործում էր 1922թ-ից:

Նախ ստեղծվել է «ԱՐՑԱԽ ԱԼԿՈ»-ն՝ «SGS» և «GVS» ընկերությունների միացման արդյունքում: Հետագայում արդեն՝ 2007թ.-ին, «ԱՐՑԱԽ ԱԼԿՈ»-ն վերանվանվել է «ԱՐՑԱԽ ԲՐԵՆԴԻ ԿՈՄՊԱՆԻ» ՓԲԸ:

- «Արցախ բրենդի կոմպանի» ընկերությունն այսօր մեծ հեղինակություն է վայելում նաև երկրի սահմաններից դուրս: Սպառման ի՞նչ շուկաների մասին կարող ենք այսօր խոսել: Եթե չեմ սխալվում, արտադրանքի 60%-ից ավելին արտահանվում է:

- Այո, մեր ընկերության արտադրատեսակները՝ թթի, հոնի, խաղողի, սալորի,

դեղձի, ցորենի, ծիրանի և վայրի տանձի օղիները, գինիները և կոնյակը մեծ ճանաչում ունեն ոչ միայն Ղարաբաղում և Հայաստանում. «Արցախ բրենդի կոմպանի»-ն արդեն նվաճել է Ռուսաստանի, Ուկրաինայի, ԱՄՆ-ի, Իտալիայի, Չեխիայի և Էստոնիայի շուկաները: Համագործակցության շրջանակներն այդպիսով չեն սահմանափակվում, ավելին՝ տարեց տարի ընդլայնվում են: Շուտով մեր մրգային օղիները կհայտնվեն նաև Ֆրանսիայում, Բելգիայում, Կանադայում:

Ռուսաստանում և ԱՄՆ-ում մեր ընկերության արտադրանքն իրացվում է «Հայկական կոնյակ» և «Արցախուռ» ընկերությունների միջոցով:

Պետք է նշեմ, որ արտադրության և իրացման ծավալներն ավելանալու միտում ունեն: Արտաքին տնտեսական կապերն ընդլայնելու նպատակով ընկերության անձնակազմը համալրվել է նոր որակյալ մասնագետներով:

- Ինչպես հայտնի է, արցախցիները թթի օղի սկսել են պատրաստել դեռևս հին ժամանակներից, և այդ ավանդույ-

թը պահպանվում է առ այսօր: Ինչպե՞ս է հաջողվում թթի օղու պատրաստման ավանդույթներին զուգահեռ կիրառել նորագույն տեխնոլոգիաները:

- Նորագույն տեխնոլոգիաների ներդրմանը զուգահեռ ընկերությունում, այո, միանշանակ պահպանվել է թթի օղու արտադրման ավանդական՝ դասական եղանակը: Միաժամանակ օգտագործում ենք մանրացնող և մամլող սարքավորումներ, չժանգոտվող մետաղյա խմորման պահամաններ: Իսկ արդեն պատրաստի օղին մշակվում է ցրտով և անցնում մեմբրանային գտիչներով:

Ուզում եմ ընդգծել, որ մեր նպատակը միայն շահույթ հետապնդելը չէ. մեզ համար չափազանց կանոն է աշխատատեղերի ստեղծումը, մարդկանց աշխատանքով ապահովելը: Մեր գործարանում աշխատում են նաև մոտակա գյուղերի բնակիչները:

Բնակչությունը բավականին մեծ քանակությամբ տարբեր տեսակի մրգեր և հատապտուղներ է մթերել գործարան: Միայն մեր այգիներում Ասկերանի համայնքի մերձակա գյուղերից ավելի քան 50 մարդ է աշխատում: Ի դեպ, ընկերությունը նաև համապատասխան պայմանագրեր է կնքել գյուղացիների հետ՝ նրանց արտադրանքի՝ մրգերի և հատապտուղների մթերումը կազմա-



կերպելու նպատակով: Նախատեսում ենք այս տարվա ընթացքում ընդլայնել այգեգործության հողատարածքները՝ նպատակ ունենալով բավարարել ընկերության մրգահոսքերի պահանջարկը, ինչպես նաև ստեղծել նոր աշխատատեղեր հարակից գյուղերի բնակչության համար: Ընդհանուր առմամբ, գործարանը 130 աշխատակից ունի:

- Սպառողները բավականին խստապահանջ են, անընդհատ նորամուծություններ են ակնկալում: Ծրագրում եք առաջիկայում նաև այլ ապրանքատեսակով ներկայանալ:

- Իհարկե, նոր արտադրատեսակներ ստանալու նպատակով մեր ընկերությունը կատարել և կատարում է գիտական և լաբորատոր բազմաբնույթ աշխատանքներ. հիմնական ուղղվածությունը մրգահատապտղային ակոհոլային խմիչքներն են: Այնպես որ, շարունակելու ենք զարմացնել մեր սպառողին:

Գիտե՞ք, պատահական չէ, որ խստապահանջ սպառողի ընտրությունը հենց մեր ընկերության արտադրանքի վրա է կանգ առնում. «Արցախ բրենդի կոմպանի»-ն մասնակցել է բազմաթիվ ցուցահանդեսների, համոես-մրցույթների և միշտ էլ պարզ ճակատով է վերադարձել հայրենիք: Բավական է նշել, որ հեղինակավոր մրցույթներին «Արցախ բրենդի կոմպանի»-ն շուրջ հինգ տասնյակ մեդալ է նվաճել, որից 30-ը՝ ոսկի:

- Ձեր գործունեության ընթացքում, բնականաբար, առնչվում եք հարկայինի հետ: Ձեր դիտարկմամբ, հարկային մարմիններն ընդառաջում են բիզնեսին: Որքանով է արցախյան հարկային դաշտը բարենպաստ ձեր ոլորտի համար:

- Միանշանակ կարող եմ ասել, որ գործող հարկային դաշտը չի խոչընդոտում այս ոլորտի զարգացմանը: Մասնավորապես արտահանումների դեպքում կիրառվում է ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափ, միաժամանակ չի հարկվում նաև ակցիզային հարկով: Չեմ կարող չնշել նաև գործընկերային այն հարաբերությունների մասին, որ ձևավորվել է մեր ընկերության և հարկայինի միջև: Օրինակ, եթե որևէ խնդիր է ծագում, հարկայինն ընտրում է ոչ թե տույժ-տուգանքների ենթարկելու տարբերակը, այլ նախապատվությունը տալիս է բացատրական աշխատանքներին:

Հետևաբար հիմքեր ունեմ վստահորեն ասելու, որ այս ոլորտն Արցախում զարգացման մեծ հեռանկար ունի: ☑

**«Արցախ բրենդի կոմպանի»-ն
մասնակցել է բազմաթիվ ցուցահանդեսների,
համոես-մրցույթների և միշտ էլ պարզ
ճակատով է վերադարձել հայրենիք:
Բավական է նշել, որ հեղինակավոր
մրցույթներին «Արցախ բրենդի կոմպանի»-ն
շուրջ հինգ տասնյակ մեդալ է նվաճել,
որից 30-ը՝ ոսկի:**



*«Իրատես գործարարի աչքը Արցախի ճամփին է.
այստեղ կարելի է սկսել, զարգանալ, կայանալ»*

*Համոզվել է «Ֆորս Դիստրիբյուշն» ՍՊԸ-ի
գործադիր տնօրեն Արմեն Ղազարյանը*



**ՀՄԱՅԻՉ ԱՐՅԱԽԻ
ԳՐԱՎԻՉ ԲԻԶՆԵՍ ԱՇԽԱՐՀԸ**



- Պարոն Ղազարյան, ինչպե՞ս սկսվեց Ձեր ընկերության՝ «Ֆորս Դիստրիբյուշն»-ի գործունեությունը Ղարաբաղում:

-Նախքան Արցախ տեղափոխվելն աշխատում էի Հայաստանում գործող «Սովմանո» ընկերության վաճառքի բաժնում՝ որպես վաճառքի գծով ներկայացուցիչ: Դեռևս ԼՂՀ Պաշտպանության բանակում ծառայելու տարիներին էի ծանոթացել տեղի միջավայրին և միանգամից նկատել՝ այն շատ բարենպաստ է բիզնեսի համար: Եվ դա կասկածի տեղ չէր թողնում. ես ավելի քան վստահ էի, որ Ղարաբաղում կան բոլոր պայմանները՝ հաջող բիզնես սկսելու և կայացնելու համար: Եվ ես, առանց վարանելու, 2009թ.-ին առաջարկ ներկայացրեցի «Սովմանո» ՍՊԸ տնօրինությանը՝ ստեղծել ընկերության պաշտոնական ներկայացուցչություն նաև մեր Արցախում. ես մեծ ցանկություն ունեի անձամբ հանդես գալ որպես ընկերության ներկայացուցիչ: Զննարկումներից և տեղի բիզնես միջավայրը մասնակի ուսումնասիրելուց հետո առաջարկս ընդունվեց, և 2009-ի սեպտեմբերին՝ որպես իրավաբանական սուբյեկտ, ԼՂՀ-ում հիմնադրվեց և իր գործունեությունը սկսեց «Ֆորս Դիստրիբյուշն» ՍՊԸ-ն՝ ներկայացնելով «Սովմանո» ընկերությունը:

- Որպես փոքր բիզնեսի ներկայացուցիչ՝ ինչպե՞ս եք գնահատում հարկային դաշտի ազդեցությունը փոքր բիզնեսի վրա:

- Միանշանակ ասեմ, որ գործող հարկային օրենսդրությունը չի խոչընդոտում փոքր բիզնեսին: Մասնավորապես, հարկերի դրույքաչափերը ցածր են: Բացի այդ, արհեստական քաջբշուկներ չկան, իսկ դա շատ կարևոր է: Յուրաքանչյուր ծագած խնդիր անմիջապես քննարկվում է համապատասխան մասնագետների հետ, վերլուծվում՝

անհրաժեշտ լուծումներ գտնելու նպատակով:

Իհարկե, ցանկալի և շատ ողջունելի կլիներ, որպեսզի Նորաստեղծ փոքր կազմակերպություններին, հատկապես գործունեության սկզբնական շրջանում, տրվեին որոշակի արտոնություններ, ինչն ավելի կհեշտացներ Նորաստեղծ ընկերությունների մուտքը ԼՂՀ բիզնես աշխարհ:



«Ֆորս Դիստրիբյուշն»-ը մտադիր է հետագայում ընդլայնել իր բիզնեսը, ինչի արդյունքում ընկերությունում Նոր աշխատատեղեր կստեղծվեն, տեղի բնակչությունն ավելի շատ կներգրավվի մեր գործունեության մեջ:

- Դուք ինքներդ Ձեզ համարո՞ւմ եք պարտաճանաչ հարկատու:

- Պարտաճանաչությունը մեր հաջողության ամենամեծ գրավականներից է: Ընդհանրապես մարդը, եթե իր էությամբ բարեխիղճ է, պարտաճանաչ, ապա որպես հարկատու էլ այլ կերպ չի կարող վարվել: Այս պարագայում կարևորվում է նաև հարկահավաքների կողմից օրենքի միատեսակ և հավասարապես կիրառումը, որը մրցակցային հավասար պայմաններ է ապահովում, իսկ դա էլ իր հերթին նվազեցնում է հարկերից խուսափելու ռիսկերը:

- Ձեր ընկերությունը զգո՞ւմ է վերջին տարիների հարկային լայնածավալ բառեփոխումների արդյունքները: Ձեր դիտարկմամբ, ի՞նչ մակարդակի վրա են հարկատու-հարկային մարմին հարաբերությունները:

- Ինչպես նշեցի, «Ֆորս Դիստրիբյուշն» ընկերությունն արդեն մեկ տարի է, ինչ գործունեություն է ծավալում ԼՂՀ-ում: Չնայած ժամանակահատվածը մեծ չէ, բայց դա լիովին բավարար է՝ համակարգում տեղի ունեցած բարեփոխումները նկատելու համար:

Հատկապես նկատելի տեղաշարժ կա փաստաթղթաշրջանառության կանոնակարգման գործում: Օրինակ, եթե նախկինում գնված ապրանքի դիմաց հաճախ չէր հաջողվում ստանալ հաշիվ-ապրանքագրեր, ապա այսօր նման խնդիր չկա: Նկատելիորեն ընդլայնվել և պարզեցվել են տնտեսավարող սուբյեկտների կողմից կատարվող ծախսերը փաստաթղթերով հիմնավորելու օրենսդրական հնարավորությունները. խոսքը, մասնավորապես, հսկիչ-դրամարկային մեքենաների կտրոսների, կրճատ հաշիվ ապրանքագրերի մասին է: Չեմ կարող չնշել հարկային մարմնի տեղեկատվական-իրազեկման աշխատանքների ակտիվացման մասին, ինչը հարկային մարմնի գործը դարձնում է առավել թափանցիկ, հրապարակային և վստահություն է ձեռք բերում գործարարների շրջանում:

- Ձեր բիզնեսն ընդլայնելու մտադրություն, Նոր ծրագրեր ունե՞ք:

- Իհարկե, «Ֆորս Դիստրիբյուշն»-ը մտադիր է հետագայում ընդլայնել իր բիզնեսը, ինչի արդյունքում ընկերությունում Նոր աշխատատեղեր կստեղծվեն, և տեղի բնակչությունն ավելի շատ կներգրավվի մեր գործունեության մեջ: Իսկ դա այսօր մեր առաջնային նպատակներից է:

TOP 10

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱՅԱՐՄԱՐ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

Հարկատեսակների քանակ, ծավալ և դրանք վճարելու համար պահանջվող ժամանակ. հենց այս երեք չափորոշիչներով են առաջնորդվել PricewaterhouseCoopers (PWC) ընկերության, Համաշխարհային բանկի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի մասնագետները՝ կազմելով աշխարհի ամենաբարեփոխված հարկային համակարգերի վարկանիշը:



«Paying Taxes 2009» հաշվետվության համաձայն, վարկանշային աղյուսակի լիդերը, ով կարող է հպարտանալ իր համակարգով, Մալդիվյան կղզիներն են: Այդտեղ հարկատուներն ընդամենը մեկ հարկատեսակ են վճարում՝ 9,1 տոկոսի չափով: Դրա համար պահանջվում է տարեկան ընդամենը 30 րոպե, ոչ ավել: Մեկ հարկատեսակ են վճարում նաև Կատարի գործարարները, միայն թե անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպման համար նրանք 36 ժամ են ծախսում:



Լիդերների եռյակը եզրափակում է Հոնկոնգը՝ իր երեք հիմնական հարկատեսակներով՝ շահութահարկ, անշարժ գույքի հարկ և սոցվճար /ընդհանուր առմամբ՝ 24,2 տոկոս/: Հոնկոնգի և Չինաստանի հարկա հավաքման համակարգերի հսկայական տարբերությունը բացատրվում է այն հանգամանքով, որ ի սկզբանե Հոնկոնգի օրենսդրությունը մշակվել է՝ հաշվի առնելով նրա հետագա՝ ցածր հարկերով ֆինանսական կենտրոն լինելու կարգավիճակը:

PricewaterhouseCoopers (PWC)-ի հետազոտությունը ցույց է տալիս, որ ամենապարզ հարկային համակարգերը գործում են մերձարևելյան և ասիական պետություններում: Ինչ վերաբերում է եվրոպական երկրներին, ապա նրանցից կարող է «գլուխ գովել» միայն Իռլանդիան, որտեղ կիրառվում է ընդամենը 9 հարկատեսակ /



ընդհանուր առմամբ՝ 28,8 տոկոս/, որոնք վճարելու համար ձեռնարկատերը ծախսում է տարեկան 76 ժամ:

Նկատենք, որ հետազոտության ընթացքում ուշադրություն չի դարձվել տվյալ երկրի տնտեսության զարգացման մակարդակին: Փաստն այն է, որ առաջատար է համարվում մի պետություն, որի տնտեսությունն ամբողջ ցանկության դեպքում անգամ զարգացած չենք համարի: Այնինչ բարենպաստ Շվեյցարիան հայտն-





վել է ընդամենը 19-րդ հորիզոնականում, իսկ Բելգիայի /64-րդ տեղ/ և Ֆրանսիայի /66-րդ տեղ/ մասին հիշատակվում է վարկանշային ցանկի մեջտեղում:

Հետազոտության հրապարակումից հետո որոշակի եզրահանգումներ են արել նաև ռուս մասնագետները՝ լրջորեն մտորելով համակարգի կատարելագործման մասին. ՌԴ-ում և հարկատե-

սակներն են բազմաթիվ, և տոկոսներն են բարձր, իսկ հարկերը վճարելու համար տնտեսվարողները ստիպված են ծախսել տարեկան միջինը 448 ժամ, այսինքն՝ 56 աշխատանքային օր... Ընդ որում՝ նրանք հրաժարվում են իրենց կոմերցիոն շահույթի գրեթե կեսից: Մի խոսքով, այդ ամենը հաշվի առնելով՝ Ռուսաստանը հայտնվել է միայն 134-րդ տեղում, այն դեպքում, երբ դրա-

նից մեկ տարի առաջ 130-րդ տեղում էր: Փորձագետները պնդում են, որ այդ մեկ տարում ռուսաստանյան հարկային ռեժիմը չի փոխվել, պարզապես ՌԴ-ին այլ պետություններ են շրջանցել, որոնք այդ ժամանակահատվածում բյուջեն համարելու նոր մեթոդիկա են մշակել: Այսպես, ՌԴ-ի հարևանությամբ տեղավորված Չինաստանը /133 տեղ/ մեկ տարում 35 հորիզոնակով առաջ է եկել:

46-րդ տեղը գրավել է ԱՄՆ-ն. մասնագետները դա կապում են հարկերի հավաքագրման տեխնոլոգիաների հետ: Ամերիկայում դրանք 10-ն են, իսկ վճարման համար էլ պահանջվում է տարեկան 187 ժամ: Ի դեպ, ԱՄՆ-ն էլ է բարելավել դիրքերը՝ մեկ տարում բարձրանալով 30 հորիզոնականով: Այս դեպքում էլ փորձագետները հայտարարում



են, որ ամերիկյան հարկային համակարգը նկատելի փոփոխությունների չի ենթարկվել, ուղղակի բնակչությունը սկսել է ավելի ակտիվ կիրառել տեղեկատվական տեխնոլոգիաները:

Ամենաբարդ հարկային համակարգ ունեցող պետություններ են ճանաչվել Ուկրաինան և Բելառուսը: Այդ երկրներում հարկատեսակներ՝ որքան ուզեք, նաև բարձր տոկոսներ, իսկ պահանջվող փաստաթղթերի ձևակերպումը գործարարներից ահռելի ժամանակ է տանում:

Աշխարհի ամենահարմար հարկային համակարգերի լավագույն տասնյակ

№	Երկիր	Հարկերի քանակ	Ծախսվող ժամանակ (տարեկան/ժամ)	հարկային տոկոսադրույք (%)
1	Մալդիվներ	1	0	9,1
2	Վատար	1	36	11,3
3	Յոնկոնգ	4	80	24,2
4	ԱՄԷ	14	12	14,4
5	Սինգապուր	5	84	27,9
6	Իռլանդիա	9	76	28,8
7	Սաուդյան Արաբիա	14	79	14,5
8	Օման	14	62	21,6
9	Զուվեյթ	14	118	14,4
10	Կիբրբասի	7	120	31,8

ՀԱՐԿԱՅԻՆ ԴՐԱԽՏԸ

ԿԱՄ ԸՆԴԱՄԵՆԸ ՄԵԿ ՀԱՐԿԱՏԵՍԱԿ ԿԻՐԱՌՈՂ ՄԱԼԴԻՎՅԱՆ ԿՂԶԻՆԵՐԸ

1190

կորալյան կղզիների շղթա՝ Ջնդկական օվիանոսում:

Միայն նախորդ դարի կեսերին անկախություն ստացած Մալդիվյան Հանրապետության տնտեսության հիմնական ճյուղը զբոսաշրջությունն է /ՀՆԱ-ի 28 տոկոսը/ և ձկնորսությունը: Պետությունում արդյունաբերության մեծ մասը բաժին է ընկնում հիմնականում հագուստի, հուշանվերների և նավակների արտադրությանը: Գյուղատնտեսությունն էլ բավականին զարգացած չէ, այնպես որ սննդամթերքի հսկայական մասը ներմուծվում է: Իսկ ահա արտահանվող ապրանքների ցանկը գլխավորում են ձկնամթերքն ու նամականիշերը: Մալդիվներում արգելված է, օրինակ, ոգելից խմիչքի և ծխեցրած երշիկի, թմրանյութերի ներմուծումը:

Միջազգային փորձագետները փորձում են վերլուծել, թե ինչո՞ւ են գործարարներն ու ձեռնարկատերերն այս երկիրն անվանում «Հարկային դրախտ»: Ամեն ինչ շատ պարզ է. Մալդիվյան կղզիներում դեռևս թերզարգացած է մասնավոր ձեռնարկատիրությունը, հետևաբար պետությունն էլ կրճատել է հարկատեսակները՝ կիրառելով ընդամենը մեկը, և՛ բնականաբար, հնարավորինս պար-

զեցվել է հարկային համակարգը: Իսկ դա, իհարկե, շատ ավելի ձեռնտու է, քան գործ ունենալ 20-ից ավելի հարկատեսակների հետ, ինչպես, ասենք, Ուկրաինայում և Բելառուսում է, որոնք ամենաբարդ հարկային համակարգ ունեցող երկրներ են ճանաչվել. վարկանշային աղյուսակ կազմելու պահին այդտեղ հարկատեսակները գրեթե 100-ի էին հասնում: Իսկ դրանք վճարելու համար տարեկան շուրջ 850 ժամ է պահանջվում, ինչը,

հիշեցնենք, տարեկան 35-36 օր է կազմում/, ընդ որում ձեռնարկատերերն ու արտադրողներն ստիպված է վճարել կոմերցիոն շահույթի մոտ 59 տոկոսը: Իսկ, օրինակ, Մալդիվներում հարկային պարտավորություններն ամբողջությամբ մարելու համար պահանջվում է տարեկան առավելագույնը 30 րոպե և վերջ:

Ի դեպ, եվրոպական պետություններից հարկային համակարգը պարզեցված է միայն Իռլան-

դիայում, որտեղ 9 հարկատեսակ է գործում, որոնք վճարելու համար գործարարը տարեկան ծախսում է

76 ժամ:

Մալդիվներում հարկային պարտավորություններն ամբողջությամբ մարելու համար պահանջվում է տարեկան առավելագույնը 30 րոպե և վերջ:

Մալդիվյան կղզիներում դեռևս թերզարգացած է մասնավոր ձեռնարկատիրությունը, հետևաբար պետությունն էլ կրճատել է հարկատեսակները՝ կիրառելով ընդամենը մեկը, և, բնականաբար, հնարավորինս պարզեցվել է հարկային համակարգը:

Մալդիվյան կղզիների իշխանությունները ծրագրում են կիրառել «կանաչ հարկ» զբոսաշրջիկների համար: Առաջարկվում է Մալդիվներում հանգստացող զբոսաշրջիկներից գանձել օրական 3 դոլարով ավելի:

Հավաքագրվող այդ գումարով նախատեսվում է պայքարել գլոբալ տաքացման հետևանքների դեմ և բնապահպանական մի շարք խնդիրներ լուծել: ☑

ՀԻՇԵՔ ՀԱՐԿԱՅԻՆԸ

ՀԱՏԿԱՊԵՍ

ԱՅՍ ՕՐԵՐԻՆ

Դեկտեմբեր

I	II	III	IV	V	VI	VII
		1	2	3	4	5
6	7	8	9	10	11	12
13	14	15	16	17	18	19
20	21	22	23	24	25	26
27	28	29	30	31		

բոլոր մանրամասներն այստեղ՝

www.tax.nk.am

ԹԵԺ ԳԻԾ

Վստահություն

Հրատապություն

Հետևողականություն

(+374 47) 948-620